2291
5. X. 4

ԹՄՐ ԳՐՈՒԻ ՆԻՒ՝

յօդուածները կրճատում է, ձեռագիրները փոխուած կամ ոչ ամբողջը (երեք թերից պակաս) *չի վերադարձնում։*

Աճեճական տեսակցութիւն խմբագրի հետ երեքշաբթի եւ ուրբաթ առաւ. ժ. 11—12։

ԹՈՂԱԳՐԱՏՈՒՆԸ

Թիֆլիս, Մարտենեան փ. տ. № 15 *թաց հաւկեղ օր* (բացի կիրակի եւ տօն օրերից), *առ. 10¼ ժ. մինչեւ 2¼-ը կէսօրից յետոյ։ Հասցէն՝*

ТИФЛИСЪ, ред. ТАРАЗЪ.
Rédaction du Journal TARAZ
Caucase. Tiflis.

Տելեֆոն № 282։



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ՝

Ադիւր 3 *ր.* (արտասահման 5 *ր.*) **Տարազ**—6 *ր.* (արտասահման 10 *ր.*) **Ադիւր-Տարազ**, *պրէմիաներով* 10 *ր.* (արտասահման 18 *ր.*) **Տարազ** *ամիսը* 50 *կ. առանձին №-ը երկու թերից* 30 *կ., մի թերից* 20 *կ.*

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ընդունւում են ամէն ժամ, Տարազի երեսի մի հինգերորդական տող առաջին անգամ 40 կոպ. վերջին անգամ 25 կ. մանրատառ (պետիտ)։ Աւտոտառմանով կրկնակի։ Շատ անգամ կրկնուող յայտարարութիւններն առանձին համաձայնութեամբ։

Գեղարուեստական, գրական, գիտական, հասարակական, քաղաքական

պատկերազարդ շաբաթաթերթ. յոլս է տալիս շաբաթը մի անգամ, կիրակի օրերը։

№ 1 Ձ ա թ ա թ թ. յունուարի 1 *Տ ա ն ի վ ե ց ե ր ո ր դ տ ա ր ի 1905*

***Բացուած է 1905 թ. բաժանորդագրութիւնը ԱՂԲԻՒՐ** ամսագրի (S. XXIII S.) եւ **ՏԱՐԱԶ** շաբաթաթերթի (S. XVI S.)*

ՆՈՐ ՏԱՐԻՆ

1905 Թ.

Ա.

Ահա կը գարնի մեծ ժամացոյցը տասներկու անգամ
Եւ օրհասականներս անողոք վերջին գարնի հետ
Ծերուկ, հին տարին անհունի խորքը կը նետուի անհետ։
Եւ այդ վայրկեանին մարդիկ անհամբեր շուտ ասի կ'ելնեն,
Բաժակները կարած նոր տարւոյ մուրքը բարձր կողջունեն.
Տնի կանչնոյ համբոյրի հետեւ... իրար կը յանկան
Հազար մի բարեք—
Բաղդաւոր տարիք...
Կը քաշէ օդաւ գաշնակի ալիք և երգը ուրախ.
Արձագանք կուտան ուռոդչ կատակ և կոչտաւ ծիծաղ,
Իրար կը շոյեն քաղցր խօսքերով, որ ողջ տարւոյ մէջ կեանքն ընթանայ մեղրածորի պէս—
Բաղդը ու անմիջ։

Եւ մտածում եմ... ան՝ այս մարդիկ, որ այսպէս ուրախ Ինքնախաբեութեամբ հետեւ կը թափեն սիրոյ, համբոյրի—
Անշուշտ հէնց վաղը պիտի մոռանան—
Մարտերն այս օրի։

Փարիսեցիներ, և՛ անցած տարի, հէնց այս վայրկեանին, Բաժակներ կարած ողջունում էիք իրար նոր տարին, Եւ մաղթում էիք իրարծաւծի անդորա յոյսերի—
Գալոց օրերի։

Բայց րոպէն անցաւ, պիտակն էլ ընկաւ և ջերմ մաղթանքին
Շատ փոխարինեց նենգամտութեան ժայռ, ահ հոգին,
Քաւ գաւերի, շահասիրութեան օձը արթնացած՝
Մոռանալ արել կ'ուտամ ու համբոյր և՛ սէրը օրհնած։
Օ՛, այդ ահ հոգով իզուր կը յուսար Թէ այս վայրկեանին
Ձեզ պիտի բերէ մի լաւ ապագայ նորամուտ տարին։

Յակոբ Յակոբեան

Փարիսեցիներ. Տէրունական ցնծագիրք



1. ՅՈՒՆՒԱՐ
1905 թ.

—

Արիւնոտ տարին գնուեց անցաւ
Այնքա՜ն սիրտ յուզող պատահարներով.
Անյայտութեան մէջ չքացաւ, կորաւ
Կործանիչ, խանդող իր արարքներով...
Նա իր հետ տարաւ կոտորած, արիւն,
Աշխարհին անէծք թողնելով բաժին,
Նա իր հետ տարաւ մի սեւ պատմութիւն,
Սեւ բիծ թողնելով մարդկութեան հակին...
Եւ եղբայրասպան հին տարին անցաւ,
Անյայտութեան մէջ չքացաւ, կորաւ...

Գալիս է աճա մանուկ, նոր տարին,
Սպիտակ թերթ թեւերը հագած.
Ի՞նչ է նա բերում մարդկանց, աշխարհին
Իր այդ սպիտակ թեւերում թագցրած:
Միակ փափագած, միակ կարօտած
Մեր ցանկութիւնն է՝ սէր եւ հաւատութիւն,
Եթէ այդ է ո՛ր թեւերում պահուած,
Դէ՛, շուտով հասիր, նոր տարի սիրուն:
Գալիս է աճա մանուկ, նոր տարին,
Ա՜խ, տեսնես ի՞նչ է բերում աշխարհին...

Ս. Յակոբեան

ՄՏՔԻ ԹԵԹԵՐՈՒՄ

(Լեհերէնից)

—

Երկրագնդի գոյութեան արշալոյսին, երբ դեռ ծածկած էր նա խիտ և անանցանելի անտառներով, երկնքի բարձունքից վայր իջաւ Միտքը:

Նա բոլորովին անկերպարանք խարխափում էր միգապատ մթնոլորտում և չը կարողանալով կառավարել իր դեռատես թեւերը, կարծես ապառաժն որոնելով, անդադար նայում էր իր շուրջը:

Արարիչը, տեսնելով նրա վիճակը, ասաց.

—«Գնա և բնակիր այն շքեղ ապարանքներում, այն տաճարներում ու արձաններում, որ մարդկային ձեռքն է տանդել ինձ համար:»

Եւ բնակեցաւ Միտքը հին աշխարհի արձաններում, մեծամեծ բերդերում և տաճարներում: Սակայն ժամանակի ընթացքում մեծացան նրա նորածոյս թեւերը:

Ջանձրոյթն ու թախիծը տիրեցին նրա հոգուն:

Թողեց նա հնդկական պագոդներն ու եգիպտական բուրգերը և, անցնելով ընդարձակ ծովեր, կանգ առաւ Դողանայի երկրներում:

Այստեղ, Պարնասի ստորոտում, քանդակապատ սիւների մէջ, նա գտաւ իր համար ապաստան և երեան եկաւ իր ողջ էութեամբ:

Այստեղ Նրա առաջ բացուեցան մազաղաթի ծալքերը և հնչեցին ի պատիւ նրա գեղեցիկ երգեր ու շարականներ:

Եւ Միտքը գոհ լինելով իր ստացած պատւից, ընակուեց այստեղ և խաղաղ ու անդորը անցրեց իր երկտասարդութեան երջանիկ օրերը:

Բայց երկար չը տեւեց այս. մարդկային ոգին, չը կարողանալով զերծ պահել իրեն կրքերից և նւիրուելով բաքոսատօներին, ոտնակոխ արեց շուտով Աստուծոյ գաստը—Մտքին:

Միտքը գանգատուեց Արարչին.

—«Տէր, Քո ստեղծած մարդիկը անպատուեցին ինձ և հեռացան բոլորովին ինձանից. փրկիր ինձ, Հայր, ազատութիւնը ճնշող այս նեղ կապանքներից, տուր ինձ աւելի հեշտ և ազատ կեանք, թոյլ տուր փոքձելու ինձ իմ թեւերի ոյժը»:

Լսելով նրա աղաչանքը, Աստուած ասաց.

—«Զինուիր հովւական ցուպով և շտապիր դէպի արեւելք. նրա ջինջ երկնակամարում դու կը տեսնես մի հրաշագեղ աստղ, որ կառաջնորդէ քեզ դէպի մի խաղճ տնակ. գնա նրա յետևից և մտիր նրա ցոյց տւած խրճիթը. այնտեղ դու կը գտնես մի նորածին երեխայ, բնակիր նրա հետ: Այդ երեխան ես եմ, նրա կերպարանքով եմ ես յայտնուելու մարդկանց: Ընթացիր հանապազ դու իմ հետքերով»:

*
* *

Հնազանդեց Միտքը Արարչի կամքին և ընթացաւ նորածին Քրիստոսի հետքերով: Նա հաւատարիմ մնաց և, գնալով հանապազ Քրիստոսի յետևից, բարձրացաւ մինչև իսկ Գողգոթա, հնթարկուեցաւ տանջանքների և նրա հետ միասին ի խաչ հլաւ:

Բայց նրա ականջին է հասնում անա Աստուծոյ ձայնը կրկին, որ ասում է.

«Մի վախիր. երեք օրից արդէն յարութիւն կառնես, նորից կը մտնես կեանքի մէջ և կը ստանաս ինձանից ընտիր թեւեր:

«Եւ կը պայ քեզ համար յաղթութեան հանդիսաւոր օրը, երբ դու կը բնակես մարդկանց սրտերում և կը տիրես ամբողջ աշխարհին. բայց մինչև այդ օրը, դու պէտք է թափառես մութ քարանձաւներում ու կառոյներում, և անդադար պէտք է փոխես կերպարանքդ և արտաքինդ»:

Թափառեցաւ այն ժամանակ Միտքը մութ քարանձաւներում և բնակեցաւ իր հետևորդների ու հաւատացեալների սրտերում:

Բայց մի քանի ժամանակից յետոյ մարդիկ ազատեցին նրան այդ աբտոյտներից, ոսկեզօծելով և ծիրանի շորեր հագցնելով գան բարձրացրին և ծնկաչոք խոնարհեցին նրա առաջ:

Եւ մտածում էր Միտքը, թէ հասել էր իր համար յաղթութեան հանդիսաւոր օրը, որովհետև թագաւորներն ու աշխարհի տէրերը խոնարհւում էին նրա առաջ և պատիւ տալիս:

Բայց համոզուց նա շուտով, որ մարդիկ խոլամփում են գեռ խորը, անդադար բնում:

Ծիրանի շորերն ու ոսկին շուտով գարձան նրա համար նոյնպէս զզելի, նոյնպէս տանելի, ինչպէս մի ժամանակ արձաններն ու փառահեղ տաճարները: Այն ժամանակ իջաւ ցահից, թողեց նրան և հագնելով իր վրայից հոգևորականի վերարկու, թափուեց վանքերի խցերում և նկուղից չերմ աղօթքների: Բայց սկսեցին շուտով երկրից վրայ երկպառակութիւններ, կռիւներ և արիւնահեղութիւններ: Թագաւորները սկսեցին բռնութեի ուժով խլել իրարից գայռոններ, թագեր և թագաւորական ծիրանիներ. խեղճ մահկանացուները զոհ էին գնում իրենց տէրերի քմահաճոյքներին:

Աստուծոյ անուան ներքոյ շատերը հետևում էին մարդկանց, բռնում անմեղներին, տանջում, կիզում և մինչև իսկ խարոյկների վրայ այրում:

Աստուած, տեսնելով այս իրողութիւնը, կոչից

Կապիտան Ն. Կապօ

Нов. Вр. *Ռուս նաւատորմիղի մասին գրած յօդուածների համար բանտարկուած 15 օր. (Ռուս. գործ. հետագիր.)*

իր աղջկան՝—Մտին, որ ճգնակենցաղութեան էր նւիրուած, և ասաց.

—«Այժմ ժամանակ չէ, որ նստես վանքի խցերում, ել հրապարակ, գնա կրթիր մարդկանց, նրանք կենդանութեան են կարօտ. երեիր մարդկանց քո ողջ վեհութեամբ, քարոզիր նրանց. գուցէ նրանք քեզ ճանաչեն, նորից մօտենան և դու ընդմիշտ բնակութիւն հաստատես նրանց սրտերում»:

Եւ Միտքը գտաւ իր համար կրկին մի նոր ապաստան. այս անգամ նա բնակեց գեղեցիկ պատկերներում, զանազան քանդակներում և նկարներում, ձեակերպութիւններում և գոթական տաճարներում, երգերում և հափներգներում: Նա աւելի և աւելի տարածում էր իր իշխանութիւնը երկրիս վրայ, բայց, աւաղ, մարդկութեան ժամանակութիւնը դեռ անզգայ քնած էր:

Եւ ասաց Միտքը այն ժամանակ. «Երկնքի հրեշտակների գեղանչիւն և հրաշալի երգերով ես կարթնացնեմ բոլոր քնածներին և կը կոչեմ իսկական կեանք վայելելու»:

Եւ հնչեց քնած ազգերի ականջին փառահեղ երգը մարդասիրութեան:

Հնչեց նրա ձայնը ամբողջ աշխարհում, այստեղ ու այնտեղ արթնացան քնից բիւրաւոր մարդիկ, բայց միլիոնները էլի մնացին մթութեան աշխարհում անխռով քնած:

Եւ հասկացաւ այն ժամանակ Միտքը, որ մարդկանց քունը անխռով է պահում ոտքից ցգլուխ մահարեր զէնքերով ծանրաբեռնուած Սֆինքսը, որ իր ահռելի ճիրաններում է պահում ամբողջ աշխարհը, որ աշխատելով մարդկանց քունը անխռով պահել, աւելի և աւելի խորն է խրում իր ճանկերը նրանց անզգայ մարմիններում:

Ազատութեան, սիրոյ և մարդասիրութեան երգերը արձագանք տալով կպան նրա երկաթապատ կրծքին, բայց չը ծառայեցին իրենց նպատակին:

Միտքը այն ժամանակ նորից դիմեց Արարչին խնդրանօք.

—«Տէր, ահա քանիերորդ գարն է արդէն Քո մահուան րոպէից, բայց երբ պէտք է թոյլ տաս Դու ինձ տիրել բոլոր մարդկանց սրտերին, երբ պէտք է գայ այն ժամանակը, որ Քո աղջիկը տիրէ երկրի վրայ այնպէս, ինչպէս Դու ես իշխում երկնքում»...

Բայց Միտքը խղճալ էր պատասխանի սպասում: Աստուած կարծես չէր լսում նրա գանգատը և լուռ էր:

Բայց միայն մի անգամ, երբ արթնացած ազգերը հնթարկեցին տանջանքների, երբ նրանց հողընները սկսեցին ճնշել ծարաւով և իզուր համբերատարութեամբ, միայն այն ժամանակ, ինչպէս և Քրիստոսի մահուան րոպէին, ինդաց, որտայց երկիրը և, կարծես, ուղեց ցոյց տալ, թէ ինքն էլ է կարեկցում մարդկանց տանջանքներին ու վշաին:

Եւ Սֆինքսը, ծածկած ամբողջովին երկաթեայ զրահով, աւելի ևս խորացրեց իր ճանկերը մարդկանց արիւնաշաղախ մարմիններում և զինքի շաչմամբ խլացնելով երկրի և մարդկութեան ճիչն ու գանգատը, բարկացած մռնչաց.

—«Ապատկէք և համբերեցէք»...

Ն. Փոր-եան

ՓԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ ՃԱՊՈՆԻԱՑՈՒՄ

Է. Հեսսէ Վարտեգգից

Ճապոնացիների զբոսի ժամուկներն ունեցած սէրը զարգացած է մինչ բացառիկ աստիճանի. սակայն այդ սէրը չէ արտայայտւում նրանց խիստ փայփայելով։ Ընդհակառակն, ճապոնացիների մեծամասնութեան մէջ մանուկները վաղ հասակից թողնւում են ինքնագլուխ և բոլորովին ազատ։ Մանուկներն այնտեղ համարւում են ընտանիքի իսկական գանձ։ Ծնողները, եղբայրները և քոյրերը նրանց գլխաքով են սիրում և առանց նրանց ճապոնացու համար գոյութիւն չունի կատարեալ երջանկութիւն։ Ընտանիքի մէջ ինչքան շատ լինեն մանուկները, այնքան լաւ է։

Շատ վաղ հասակից ամէն ինչ այսպէս է յարմարեցնւում, որ փոքրիկ քաղաքացիների զոյութիւնը գարթի և



Ճապոնական Կառուիր խաչի ծառայողները ձեւանում են միւռած, ուսկսի օգնեն վիրաւոբեալներին։

զարգանայ։ Ճապոնացիները միւս բոլոր ազգերից էլ աւելի հնարագէտ և ճարպար են։ Թղթի կտորտանքներից և փայտի ձողերից, որ առաջմաքրիչի ժեծութիւն ունեն, շինում են զարմանալի բաներ. ոչ թէ միայն տիկինները, այլ և տաճարների, նաւերի, հողմաղացների և ջրաղացների, կառքեր և սրա նման բաներ։ Մի խօսքով ամէն բան, ինչ աչք խարհուժս մեծ չափերով կայ, նրանք այնպէս փնրոյշ և թեթև ձեւակերպում են ամենափոքր չափերով, որ թւում է թէ փչելով կարելի է նրանց թռցնել ինչպէս մի փետրիկ։ Մեր երեխաներն իսկոյն և նէթ կը կոտրէին այդպիսի նէթերանման խաղալիքը, բայց փոքրիկ ճապոնացիները նրանով ամբողջ շաբաթներ են խաղում։ Հող չէ, երբ վերջապէս նա քայքայւի, ուրուվհետև մի գրոշով կարելի է իսկոյն գնել երկու - երեք նոր բան։

Երբ սարքւում են ժողովրդական տօնախմբութիւններ, կամ ինչպէս ճապոնիայում առում են՝ Մատսուրի, միայն չափահասներին ի նկատի չեն ունենում. տեսարանների կէսը նշանակւում է մանուկների համար, թէև մեծերն էլ փոքրերի հետ միասին նրանցով զբաղւում են։ Երթուղացու համար դժուար է երեւակայել Մատսուրիի հանդիսաւոր և տարօրինակ պատկերների կենդանութիւնը, շփոթն և խայտաղէտութիւնը։ Այդ ժամանակ քաղաքի բնակիչների կէսը հաւաքւում է ընդարձակ հրապարակում և տաճարների այդինեբում, ինչպէս օրինակ Կիօտօյում, որ գտնւում է Կամագաւա գետի ցամաքած դաշտակում, ուր և ժողովուրդն անց է կացնում ամբողջ օրը և գիշերւայ կէսը։ Ոչ աղմուկ է լինում, ոչ իրարանցում, ոչ արբեցողութիւն մինչ պիտակցութեան կորցնելը, ոչ մի տգեղ տեսարան, որ ուրիշ երկրներում անպաժան են լինում ժողովրդական բոլոր ուրախութիւնների ժամանակ։ Ճանաստիկական պճրանքներով



Ճապոնական զօրքը բարձուքիւնի վրայ։

հովհարներով։ Գիշերը հրապարակը լիքն է լինում հազարաւոր գոյնզգոյն լապտերներով, ամէն տեղ կեանք և ամէն տեղ ցնծութիւն է տիրում։ Յետ ու առաջ շարժւող մեծերի և փոքրերի ամբոխի մէջ ամէն տեսակի տեսարան կայ, սկսած թատրոնից։ Բաց երկնքի տակ տեղի են ունենում բազմաթիւ նկարագրութիւններ և լաբախազութիւններ, ուր մանր տղաները և աղջիկները երբեմն խիստ դժւար բաներ են անում, որոնց խրախուսելու համար պիտոյ ամբոխը մէկ մէկու հետից նրանց փողեր է շպրտում։

Ժողովրդական զբօսանքների մէջ երկրորդ տեղը պատկանում է խեղկատակավայրերին, ուր այ ու ձախ նկարւած են ճապոնական պատմութիւնից ամենագեղեցիկ տեսարաններ կամ նշանաւոր մարդկանց՝ զեղարուեստա-

Ռուս գերեալ եւ հիւանդ սպաները Դայլնիում։

զարդարուն այդ հարարուր տարուայ ժամանակ ինչպէս իրենց պահում են ճապոնացիները։ Ամբողջ անտառը լցւում է պլխներին բռնած գոյնզգոյն հովանոցներով, ամբողջ ծովը լցւում է ձեռներին տատանուղ նոյնպէս գոյնզգոյն լապտերներով։ Գիշերը հրապարակը լիքն է գէտների, գնդապետների, երգիչների և պարող կանանց պատկերներ։ Դիտողներին ցոյց են տալիս ամէն տեսակի պատկերներ. այնտեղ են և Դայմիօ շքեղ պալատները և հռչակաւոր թէյատների տեսարանները, Նիկկօյի տաճարները, հրաշունչ Ֆուդիսան— և այս բոլորն էլ տեղի են ունենում երկեցողութեան հետ միասին, ըստ նրանց բովանդակութեան։ Ժողովրդի այդ զանգւածի մէջ խոնւում են պատրոներ, արնգահարներ, լաբախազացներ. այստեղ ամբոխի ուշադրութիւնը իր կողմն են գրաւում հնգաձայն պատմողները, այնտեղ օյինբազները կամ գուշակողները։ Վաճառականները մի անսովոր հնարագիտութեամբ գրաւիչ գոյներով անընդհատ գովարանում են իրենց ապրանքները։ Մանուկներին առաւելապէս զբաղեցնում են կուի



Ֆոտ. Ռուստոմի
Վայրենի տիպեր



Ուրախ ես, Ամերիկա՛ս ազատ, որ ունիս ամեն տեսակ ինքնագործ ուրախություններ և զվարճություններ, որոնք ոչ միայն ուրախացնում են մարդկանց, այլև նրանց ֆիզիկական ուժերը զարգացնում։ Ամեն տարի Յունվարի 1-ին, Նոր տարվա առթիվ, ամերիկացիները մեծ ուրախություններ են անում։ Ամեն տեղ, ամեն քաղաքում, ամեն գյուղում, ամեն ագարակում, ամեն ֆերմայում, ամեն տնակում, ամեն ամրոցում, ամեն պալատում, ամեն ամեն տեղ, ամեն ինչ ուրախանում է, ամեն ինչ ծիծաղում է, ամեն ինչ ցնծում է։ Ամեն տեղ ուրախ երգեր են երգում, ամեն տեղ ուրախ պարեր են պարում, ամեն տեղ ուրախ խաղեր են խաղում։ Ամեն տեղ ուրախ ծիծաղ, ուրախ ժպիտ, ուրախ ծաղրանք, ուրախ կատակներ, ուրախ զվարճություններ, ուրախ ուրախություններ։ Ամեն տեղ ուրախ ամերիկացիներ, ուրախ ամերիկացիներ, ուրախ ամերիկացիներ

Խորհուրդ վեհ եւ սքանչելի
Հովիւներդ հրեշտակների հետ երգում են «Աւետիս»

միջոցին յարգանքներ կը փոխանակեն իրարու հետ.

—Կաղաչեմ, աւէր։

—Կը խնդրեմ, հրամմեցէք, Դարբիել աղային տուր, աղջիկս։

—Չեմ ընդունիր, Արիմիւէք աղային տար, աղջիկս։

—Ոտքերնիդ պարեմ, մի ընէք, աղջիկը հոգնեցուցէք. Համբարձում աղային հրամցուր, աղջիկս։

—Աստած չընէ, ես ո՞վ եմ որ ձեզմէ առաջ առնեմ. Դարբիել աղային գնա՛, աղջիկս։

—Չեմ առներ, չեմ առներ, պարապ տեղը մի՛ զար, աղջիկս։

—Արիմիւէք աղան առնելու է նախ և առաջ։

Մոռցանք ըսկսու թէ այցելուց մէջ չորրորդ մ'ալ կայ որ գաստատու է և ուսումնական խորհրդէն վկայական ալ ունի։

—Կարելի չէ որ ընդունիմ. կը վայլէ՞ ինձի որ ձեզմէ առաջ հրամցուիմ. Համբարձում աղան պէտք է որ...

—Իմին խօսք՞ս կըլլայ, տէր ողորմիա, ճուրճինայի՞ պիտի հլլանք ամէն. բան կարգով կանոնով ըլլալու է. Արիմիւէք աղային տուր. աղջիկս. Արիմիւէք աղան այսօր, Աստած տայ, երեսուն հազար ոսկւոյ տէր է, ես անոր ծառան պիտի չեմ կրնար ըլլալ որ։

—Աս ի՞նչ պարապ խօսք է, Համբարձում աղա, դուն պատուաւոր մարդ մ'ես...

—Աստ՛ո՛ւծ, պատուաւորութիւնը ստակով կըլլայ հիմայ, անանկ չէ՞, պատուիլի։

—Անանկ է, էֆէնտիմ։

—Դարբիել աղային տէրը անանկ է նէ, ան ալ թագաւոր է։

—Հոգնեցուցիք աղջիկս, էֆէնտիմ...

—Իրաւ է։

—Մեղք է գաւալլէն։

—Վնաս չունի, վնաս չունի, չհոգնեցայ ես, կը պատասխանէ աղջիկն չունչը կտրած։

—Անուշ չ'պիտի առնէք այսօր, հրամմեցէք, կըսէ տան տէրը։

Վերջապէս Արիմիւէք աղան կը հաւանի նախապատուութիւնն ընդունիլ և, երկար պատմութեամբ մը պարզելէ յետոյ այն պատճառները որոց համար կուզէր ամենէն վերջ ուտել անուշ, կըթարեհաճի դալ մ'անուշ առնելու և աւուր պատշաճի բարեմաղթութիւնները ընելէ յետոյ անուշն ուտելու։

Կարգը Համբարձում աղային է.

—Շնորհաւոր նոր տարի, կիրակոս աղա։

—Շնորհակալ եմ, կը պատասխանէ տան տէրը։

—Եւ բարի կաղանդ։

—Շնորհակալ եմ։

—Եւ Աստուածայայտութիւն Տեառն մերոյ։

—Աղջ ըլլաք։

—Ուտիք է մեզ ուխ օր և անձրեւաբեր հոգմանք։

—Այո՛։

Համբարձում աղան ալ կը կատարէ իր պաշտօնն ըէ և կը մոռնայ Գերմանիոյ կայսեր պահպանութեան տարեդարձը յիշելու։

Դարբիել աղան դպրն անուշամանի երկնցնելով կսկսի բարեմաղթութեանց։

—Շնորհաւոր նոր տարի և բարի կաղանդ և Աստուածայայտութիւն։

—Շնորհակալ եմ։

—Աստուած շատ տարիներու հասցընէ խնդութեամբ։

— Բարեկամօք հանդերձ։

— Աստուած քեէէր չըցընէ։

—Ամէն։

— Աստուած քեզ պէրէքէթ տայ։

—Ամէն։

—Տէր Աստուած ձեր տունը չէն պահէ։

—Ողջ ըլլաք։

—Փեսաներ առնէք, հարսներ առնէք։

—Շնորհակալ եմ։

—Թոռներ, պահնակը պագնէք։

—Շնորհակալ եմ։

—Թոռներ ունենաք։

—Աստուածով։

—Թոռներու թոռներ ունենաք։

—Աստուած լսէ։

—Թոռներուդ թոռներուն թոռներն տեսնաս։

—Շնորհակալ եմ։

—Հիւանդութիւն և ցաւ չը տեսնաք։

—Ամէն։

—Որ ծերութեան հասնիք։

—Դուք ալ։ Անուշ ըլլայ, Դարբիել աղա։

—Շնորհակալ եմ, կիրակոս աղա, հող բռնես՝ ոսկի դառնայ։

—Հրամմեցէք, պատուելի՛։

Պատուելին պարզ թէմէննան մ'ընելով հապճեպ մը գդալին կը դպչի, ափսէն աղջկան ձեռքէն կխփնայ և պատուելիին վրան գլուխը կանուշանայ և կը ջրանայ։

Հիւրերն իրար կանցնին։

—Վախցա՞ր, օրիորդ։

—Մի՛ վախնար, աղջիկս։

—Դինիի մէջ քիչ մը կրակ մարեցէք և քող տուէք որ խմէ։

—Ահեղ աղջիկ։

—Մենք պատճառ ենանք։

—Թևէն սրիւն առէ՛ք։

—Թարլաք մը նետել տուէք։

—Փէռոսէլի բասթիլլներէն տուէք։

—Սինկէրի կարի մէքենայ մը չունի՞ք։

—Վախցա՞ք, օրիորդ։

—Չէ, չէ, չըվախցայ, բայց կը ցաւիմ որ...

—Ցաւելու բան չկայ, օրիորդ, ասանկ օրեր շատ կը պատահին ասանկ փորձանքներ։

—Դեռ, հանգստացի՛ր, օրիորդ։

Աղջիկն պուբա կիյնէ։ Դիւրին է գուշակել թէ ինչ կրսէ մարէն։

—Պատուելի, մտանդայով տուշ ըրիր չէ՞... Փիչ մը խըչհցաւ վրան։

—Փէռոսէլի բասթիլլէն քսեցէք վրան։

Տ. Մաթէոս արհեպիսկոպոս Իզմիրեան

—Կը չորնայ, կը չորնայ։ Մնաք բարով, պատուելի։

—Երթաք բարով, էֆէնտիմ։

—Մնաք բարով, պատուելի։

—Երթաք բարով, պէյս։

—Կեցի՛ք բարով, պատուելի։

— Երթաք բարով, էֆէնտիս։

† Ե. Պարոնեան

Այժմեան Իսրայէլացիք Երուսաղէմում

„ԱՆՄԱՀԸ“

Վէպ Ալֆօնս Դօդէի. նկարները Լամի Բայարի.

ԱՄԱՆԱԿԱԿԻՑ հուչակաւոր վարդկանց» բառարանում—1880 թ. հրատ. «Ասիէ Բէխիու» վերնագրի տակ տպուած է հետեւեալը.

«Ասիէ Բէխիու (Պետրոս Ալէքսանդր Լէօնարդ), ֆրանսական գիտութեանց ճեմարանի անդամ, ծընուել է 1816 թ. Սովանիայում (Պնւի դէ-Գօմ)։ Հասարակ երկրագործի որդի՝ փոքր հասակից գրաւեց պատմութեան ուսումնասիրութեամբ։

Շնորհիւ իր հիմնաւոր կրթութեան, որ նա ստացել էր Րիոմի դպրոցում և Մեծն-Լուդովիկոսի կօլէջում, կարողացաւ ժանել բարձրագոյն նօթմալ դպրոցը։ Դասընթացն աւարտելուց յետոյ նա պատմութեան ուսուցչի պաշտօն ստանձնեց Մենտօսի լիցէոնում. այստեղ նա գրեց «Գծեր Մարկոս-Աւրելիոսի կեանքից» աշխատութիւնը, որ պսակեց ֆրանսական ճեմարանի վարչութեան կողմից։ Մի տարուց յետոյ պ. դը-Սալվանտի հրաւիրից նրան Պարիզ Շնորհալի, երիտասարդ պրօֆեսօրը կատարելապէս արդարացրից դէպի իրան դարձրած ուշադրութիւնը՝ հրատարակելով, մէկը միւսի հետևից, երեք պատմական աշխատութիւններ. «Լուդովիկոս XV-ի նախարարները» (ճեմարանից վարձատրուած), «Բօնապարտ եւ Թաճադրութիւն» (նոյնպէս վարձատրուած) և «Ներածութիւն Օրլեանի տան պատմութեան» նշանաւոր, հակայ պատմական աշխատութեան սկիզբը, որի վրայ նա աշխատել էր քսան տարի։ Այս աշխատութեան համար նա ընտրուեց ճեմարանի անդամ։ Սակայն նա դեռ պրանից առաջ էր կապել ճեմարանի հետ, որովհետև ամուսնացել էր ֆրանսական պետարեսից ճեմարանի անդամ, հռչակաւոր ճարտարապետ Պաուլին Բէխիուի աղջկայ վրայ, որ թոռն էր պիտութեանց ճեմարանի դեկան Ժան Բէխիուի— «Օվիդիայի» յայտնի թարգմանչի և «Նամակներ Ուրանիային» հեղինակի, որի մոքերի անթառամ թարմութիւնը դեռ մինչև այսօր էլ զարմացնում է գիտութեանց ճեմարանի անդամներին։

«Ամենքին յայտնի է թէ Լէօնարդ Ասիէ Բէխիու ինչպիսի ազնիւ անշահասիրութեամբ թողեց իր պաշտօնը 1878 թ.։ Նա արտաքին գործերի նախարարութեան դիւանապետն էր, Թիերի ընկերը և բարեկամը. նա հրաժարուեց իր պաշտօնից, որովհետև չը կամեցաւ հպատակեցնել իր գրիչն ու պատմական իրողութիւնների անաչառութիւնը ժամանակից կառավարիչների պահանջներին։ Այնուհետև նա՝ երկու տարւայ ընթացքում գրեց իր պատմութեան վերջին երեք մասերը և խոստանում է հրատարակել մօտիկ ապագայում «Անյայտ Դալիլէյ» աշխատութիւնը, որ նա քաղել է վերին ասիճանի հետաքրքիր և՝ դեռ ոչ ոքից չը հրատարակած, ձեռագրերից։

«Ասիէ Բէխիուի աշխատութիւնների ժողովածուն կարելի է ձեռք բերել Պըտի-Սեկարի մօտ— ճեմարանի գրավաճառանոցում»։

Կենսագրական տեղեկութիւնների ճշտութիւնը չը պէտք է կասկածելի լինի, որովհետև բառարանի հրատարակիչը իրաւունք է տալիս գործի մէջ ամեն մի շահ ունեցողին նկարագրել ինքն իրան։ Սակայն ինչու համար է ասւում այստեղ՝ թէ Ասիէ Բէխիուն ինքն է հեռացել պիւանապահի պաշտօնից, մինչդեռ՝ ամենքին յայտնի է, որ նրան հրաժարեցրել են առանց խղիրքի և կամ, ասելի պարզն ասած, վռնդել են, ինչպէս մի կառապանի, նրա համար, որ նա իր «Օրլեանի տան» պատմութիւնը գրելուց՝ թոյլ է տուել հեռանալ նախագասութիւնը (հատոր V. երես 327). «այն ժամանակ, ինչպէս այժմ, Ֆրանսիան հեղեղւած էր ռամկավարականներով»։

Ահա թէ մինչև ուր կարող են հասցընել այլաբանօրէն գրւած խօսքերը։ Տաճկաց հազար ֆրանկ ռոճիկ, բնակարան Օրսէյեան պետկրի վրայ, վառելիք, լոյս, բացի դրանից՝ պատժական վկայաթղթերի մի՝ անփոխարինելի գանձ, որից նա օգտւում էր իր աշխատութիւնների համար. ահա թէ ինչ արժէց նրան «ռամկավարականների հեղեղը»։ Դժբախտ պատժագիրը երկար ժամանակ չէր կարողանում մխիթարել. կուրտաը չափազանց ծանր էր և զգալի, մանաւանդ շաբաթւայ այն օրերում, երբ պալիս էր Տէյսեդրը։

Տէյսեդրը յատակ մաքրող էր. անյայտ ժամանակներից ի վեր նա չորեքշաբթի օրերը, առաւօտ վաղ, գալիս էր յատակները մաքրելու. իսկ ժամը՝ ժօտ մէկին տիկին Ասիէն հիւրեր էր ընդունում առուտնու առանձնասենեակում, որ բնակարանի միակ կարգին սենեակն էր հիանալի առաստաղով, բայց վերին աստիճանի անյարմար։ Դժւար չէ երևակայել թէ՝ ինչ ապատրուաթիւն էր մտնում այս՝ պարբերաբար կրկնուող քաոսը աշխատասէր պատմագրի վրայ։ Ասիէն ատեց իր դեղնադէմ հայրենակցին— Տէյսեդրին, որը, առանց քաշւելու, դէս ու դէն էր քշում ծանր դրասեղանը՝ վրան թափթփած գրքերով, տետրակներով, թղթերով, մի սենեակից միւսը



Այն էլ մէջքից կրացած, ինչպէս կարդինալ Լա-Բալիու վանդակում

էր հալածում նրան, և այս բոլորը այն հիման վրայ միայն, որ նա ծնւել էր Րիոժում, իսկ Ասիէն— Սովանիայում։

Վերջապէս յոգնած պատժագիրը վախչում, թագնում էր առանձնասենեակի վերև մի ցածլիկ, փոքր անկիւնում, որտեղ նա հազիւ կարողանում էր տեղաւորւել, այն էլ մէջքից կրացած, ինչպէս կարդինալ Լա-Բալիուն իր վանդակում։

Այդ փոքր սենեակի ամբողջ կահ-կարասիքը բաղկացած էր մի հին բազկաթոռից և մի թղթախաղի սեղանից։ Լոյսը ներս էր թափանցում՝ դէպի դաւթ նայող մի պատուհանից, կամ, ասելի ճիշտն ասած, մի ծակից, որ շինած էր դէպի ջերմանոց տանող դռան մէջ։

Մի գեղեցիկ առաւօտ, Ասիէի այնտեղ նստած ժամանակ, յանկարծ զանգը քաշեցին նախասենեակում։

—Այդ դուբ էք, Ժաժ, հարցրեց ակադեմիկոսը։

Զորեքաբթի օրերը առաւօտ վաղ գալիս էր յատակներ մաքրելու։

—Ո՛չ, ձեր որդին է, պատասխանեց Տէյսեդրը. չորեքշաբթի օրերը նա էր բաց անում դուռը, որովհետև Կորնէլիան այդ ժամանակ հագցնում էր իր տիրուհուն։

—Ի՞նչպէս է մեր «տիրոջ» կենցաղավարութիւնը, հարցրեց Պօլ-Ասիէն և, առանց պատասխանի սպասելու, ներս մտաւ մօր սենեակը։

Ակադեմիկոսը չէր խօսում. «տէր» տիտղոսը նրան բարկացնում էր, ինչպէս կծու հեգնութիւն։

—Պ. Ժաժին խնդրեցէք ինձ մօտ, հէնց որ գայ, բղաւեց ծերունին առանց նայելու ծառային։

—Լաւ, պատասխանեց Տէյսեդրը և նորից սկսեց փոշի բարձրացնել։

—Բարև, մայրիկ։

—Այդ դու ես, Պօլ... մտիր.... Զգոյշ, կոնճահինա, պլիսը չը փշացնես։

—Այստեղ էք նախաճաշելու, պ. Պօլ, հայրեց նրան մի յաղթանդամ, չէշտ ու պլպլուն գէմքով գեղջկուհի, որ յատակի վրայ նստած կարկատում էր տիրուհու զգեստի պատռած փէշը։ Խօսակցութեան եղանակից երեում էր, որ նա մի ադախին է, որի ոտքիկը կանոնաւոր չէն վճարում։

Տիկին Ասիէն հաղնում էր հայելու առաջ կանգնած։ Նա բարձրահասակ էր, վայելուչ կազմւածքով և դեռ գեղեցիկ։ Առանց տեղից շարժելու մայրը իր թուչը դէմ արաւ որդուն, իսկ որդին՝ համբուրելու ժամանակ սրբեց նրա մնդոյրը իր շիկագոյն, նօսր և սրածայր մորուքով։

—Պօլը ժտգիր չէ նախաճաշելու. նա մի բաժակ միայն մաու այստեղ. կաթը սպասում է դուրսը։

—Բա նոր, անպլիական կաթն է։ Տեսնենք ինչ բան է։

Տիկին Ասիէն այս խօսքերի վրայ ժօտեցաւ պատուհանին և բիչ բարձրացրեց վարագոյրը. նոր կաթը վայելում էր ժայխան արևի ճառագայթների տակ։ Համազգեստ հագած սպասաւոր Սաէնը ներբև ձիու սանձը բռնած պահում էր։

—Ախ, ինչ սիրուն բան է, բացականչեց և՛ կորնէլիան կաթին նայելուց. երևի ամենքն էլ հիանում են, երբ մեր «տէր» մէջը նստած այս ու այն կողմն է դառնում։

Մօր դէմքն ուրախութիւնից փայլեց։ Տների

պատուհանները բացուած էին. ամբողջը վազում էր տեսնելու որդու կառքը։ Նա աղախնին դուրս ուղարկեց և ինքն սկսեց կարկատել իր շրջազգեստը, սպասելով և մասամբ գուշակելով, թէ՝ ինչի մասին պիտի խօսէր Պօլը. իսկ նա բազկաթոռի վրայ ընկած պատեցնում էր ձեռքին փղոսկրէ հովհարը, որը շատ լաւ ծանօթ էր դեռ մանկութեան հասակից։ Նա սաստիկ նեղան էր ժօրը. նոյն կարմրաթուշ թուխ դէմքը, ճկուն կազմուածքը, ժոխրագոյն աչքերը, թեթև կերպով դուրս ցցած քիթը, ոլ դէմքին ծաղրելի կերպարանք էր տալիս։ Երկուսն էլ սպասողական դիրք էին բռնել և չէին խօսում. հեռւից լսւում էր յատակ մաքրողի խոզանակի խշխշոցը։

—Այս բոլորը դեռ վատ չէ, ասաց, վերջապէս, Պօլը։

—Ի՞նչ է պատահել։

Պօլը ցոյց տուց հովհարի ծայրով մօր մերկ կռնակը և ուսերը։

Մայրը ծիծաղեց։

—Այո՛. բայց, ահա, այս ի՞նչ է, ասաց մայրը ցոյց տալով իր կնճռոտ վիզը, որ ծերութեան նշան էր, ու մտածեց։

—Բոլորը դատարկ բան է... դու գեղեցիկ ես... և այդ ինձ բաւական է։

Այս յայտնի շատախօս կինը, որ վարպետ էր առելու և ընդունակ՝ իր նմանների շրջանում գժւար կացութիւնից դուրս գալու, խօսք չէր գտնում արտայայտելու իր միակ, ճշմարիտ զգացմունքը։ Իսկապէս, նա այն կանանցից չէր, որոնք դժւարանում են խոսոտվանել իրանց ծերութիւնը. նա վազուց է հրաժարուել դիւր գալու ժամից և կենդրոնացրել է քանդակայ որդու վրայ իր կանացի պճնասիրութիւնը, ինքնասիրութիւնը։ Պօլը շատ գեղեցիկ էր, կարճ խուզած մազերով, փոքրիկ միրուքով, հագնւած ինչպէս արտիստ. գինւորական կրթութեան հետքերը երևում էին նրա վրայ—իրր հետևանք գինւորական ծառայութեան։

—Առաջին յարկը վարձով ուլիր թէ ոչ, հարցրեց մայրը։

—Ինչպէս չէ. մի կատու անգամ չեկաւ վարձելու. յայտարարութիւնն էլ չօգնեց։ Վեգրին, երբ ի ցոյց դրած իր քանդակագործ աշխատութիւնները տեսնելու ոչոք չէր գալիս, ասում էր. «չը գիտեմ, ինչ է պատահել նրանց. չեն գալիս ու չեն գալիս»։ Նոյնը կարող եմ կրկնել և ես։ Եւ նա ամբողջ ժպատց, երբ վերև ընկաւ թէ Վեգրին ինչպիսի անդրդուելի հպարտութեամբ էր վերաբերում դէպի հասարակութեան բացակայութիւնը։ Սակայն տիկ. Ասաիէն չէր ծիծաղում։ Հիանալի բնակարան առաջին յարկում, Ֆորտիւնի փողոցի վրայ, սրանչելի ճարտարապետական շինուածք Լուդովիկոս XII-ի ճաշակով և, վերջապէս, իր որդու շինած առւնը. էլ ինչ են ուզում նրանք... նրանք... այսինքն նրանք, որոնք չեն յաճախում Վեգրինի յուցահանդէսը։

—Մինչդեռ գործն այնքան շահաւէտ էր և բերում, ասաց տ. Ասաիէն վերջացնելով կարը։

—Սրանից էլ լաւ բան...

—Հողային վարկի հիմնարկութիւնը կիրաւ ինձ... հապա կապալառուները... միայն հիւանդերին ես պէտք է վճարեմ ասան հազար ֆրանկ, իսկ փող չունեմ։

Այդ ժամանակ տ. Ասաիէն հագնում էր կօրսաժը՝ հայելու առաջ կանգնած. նա գունատւեց, ինչպէս մի մինամարտող, երբ նրա հակառակորդը բարձրացնում է զէնքը և սկսում է նշան առնել։

—Մուսոյում կատարած աշխատութեանդ վարձը ստացել ես։

—Շատ վազուց։

—Իսկ Բօզնի արձանի վճարը։

—Վեգրին դեռ չէ վերջացրել գործը։

—Ինչու՞ նրան պատւիրեցիր. հայրդ նախագուշացրեց քեզ։

—Գիտեմ... ճնշւարանում նրան ատելն չեն կարող։ Պօլը վերկացաւ տեղից և սկսեց անցուդարձ անել սենեակում։

—Լսիր, մայրիկ, դու ճանաչում ես ինձ... եթէ պատւէրս Վեգրինին ուի, կը նշանակէ հիմնաւոր պատճառներ ունէի դրա համար։ Տասն հազար ֆրանկ ունիմ ժամդ, յանկարծ հայրից նա կանգնելով մօր առաջ։

Մայրը վազուց էր սպասում այդ հարցին. Պօլը հէնց դրա համար էր եկել։

—Տասն հազար ֆրանկ. ինչ ես ասում։ Նա այլևս ոչ մի բառ չարտասանեց, միայն դէմքը պարզ կերպով հատնելն էր արտայայտում. «դու գիտես, որ բոլոր ուղեցածս քեզ եմ տւել... որ ցնցոտիներ եմ հագնում, որ երեք տարի է նոր գլխարկ չեմ գնել... որ Կոբենհաինան է լանում ճերմակեղէնս, որովհետև այդպիսի փալասի կտորտանք ամօթ է ուրիշին տալ լանալու. դու գիտես նոյնպէս, որ տանջանք է ինձ համար մերժել քեզ որև է բանի մէջ... էլ ինչոի համար ես խնդրում ինձ»։

Պօլը հասկացաւ այդ աչքերը և շտապեց պատասխանել.—Ի հարկէ, եթէ փող լինէր մօտս...։ Է, իսկ մեր պարոնը... այնտեղ, վերևում... չի կարելի արդեօք նրանից խնդրել. դու գիտես նրա դէմքը շարժել, աւելացրեց Պօլը հանաքի ձևով։

—Անցայ այն ժամանակը։

—Սակայն նա աշխատում է. գլքերը վաճառւում են, իսկ դուք այնքան քիչ էք մսխում։ Նա աչքը դարձրեց սենեակի խաղուկ սարքուկարգի վրայ. հին կարասիք, գունատ վարագոյրներ, մաշած գորգեր, որոնք պէտք էին ծնողների հարստնիքի ապիթով։ Սակայն ձեր են պնում փողերը։

—Մեր ծերուկը «չաուրթիւն» հօ չէ՞ անում, ծիծաղելով ասաց Պօլը։

Դա այնքան անհրապուրելի թւաց, որ տ. Ասաիէն նոյնպէս ծիծաղեց։

—Ոչ, ասաց մայրը. այդ կողմից դու կարող ես բոլորովին հանգիստ լինել։ Միայն տեսնում ես էլի... նա մեզանից թագցնում է իր փողերը... ասես պէս պետի տակ է թաղում... մենք չափազանց յաճախ ենք փող ուզում նրանից... դրա համար էլ նա մեզ չէ հաւատում։

Մայրը և որդի խօսում էին կամաց ձայնով, առանց իրար նայելու։

—Իսկ պատն ինչպէս, կրկնեց Պօլը. չը փորձե՞ս արդեօք դիմել նրան։

—Գժւո՞ւ ես, ինչ է։

Գրեթէ հարիւր տարեկան ծերուկի Բեխոնն մինչև ուղեղն ու ծուծը էգոիստ, քաղցածութիւնից կը կոտրէր նրանց, միայն թէ չը ըրկուէր մի բաշ բժախոտից և կամ սիգարետկի օձիքին ցցած փորոցներից մէկից։ Ուզեց երիտասարդ. տես բանը որտեղ է հասել, որ այդպիսի մուր յղայու։

—Ուզում ես... ես խնդրեմ...

—Ուժմից։

—Նրանից, որ ապրում է Կուրսել փողոցում... ի հարևանութեան։

—Այդ ես քեզ արդեօք եմ կարողանում, դարձից Պօլը հրամայական ձայնով. նրա շրթունքները գունատւեցին, աչքերում փայլեց չարութեան կրակ։—Անհոգ եղիր, մի կերպ դուրս կը գամ այս դրութիւնից... սրանից առնէ վատ օրեր եմ տեսել, աւելացրեց նա հեգնութեամբ։ Մայրը տատ նրան դիմարկը, որը նա որոնում էր աչքերով և պատրաստւում էր հետևանք, որովհետև չը յաջողւեց փող առանձ։ Տիկ. Ասաիէն, որպէսզի յետաձգէ գնալը, թէկուզ մի քանի րոպէով, սկսեց պատմել նրան թէ յանձնարարել են իրան դլուխ բերել մի հարսանիք։

«Հարսանիք» բառը լսելուն պէս Պօլը զոդաց և լարեց լսողութիւնը։—Որի՞ հարսանիքը, հարցրեց նա, ծուռ նայելով մօրը։

—Ես խոստացել եմ զաղտնի պահել այդ. բայց քեզ, թող այդպէս լինի, կասեմ... Իշխան դ'Ասիխ։

—Ո՞ւմ հետ։

Տիկին Ասաիէն խելքը գլխին կին էր և պատասխանեց անորոշ կերպով.—Դու նրան չես ճանաչում... օտար երկրացի է, շատ հարուստ... եթէ գործը գլուխ եկաւ, կօգնեմ քեզ։ Պայմաններն արդէն կազմուած են, ոչ բերանացի, այլ գրաւոր կերպով։

Պօլը հանգստացաւ. նրա շրթունքների վրայ երևաց ուրախ ժպիտ։

—Է, հապա դքսուհին ինչպէս, հարցրեց նա։

—Ի հարկէ, ոչինչ չը գիտէ։

—Իսկ Սամին, նրա իշխանը. չէ՞ որ նրանք ատանևհինգ տարի է, կապւած են իրար հետ։

—Աւելի վատ. նա արդէն պատւել է. այս խօսքերի վրայ նրա սրած ձեռքի մի շարժումը չափազանց արտայայտիչ էր։ Կանայք այսպիսի դէպքերում իրար լինայել չը գիտեն։

—Սակայն քանի՞ տարեկան է դքսուհին։

—Նա ծնւել է 1827 թ.։ Հաշւիր. մի տարով ինձնից մեծ է։

—Դքսուհին, զարմացաւ Պօլը։

—Այո, այո. ախ, դու տպէս. անշուշտ կարծում էիր թէ նա քսան տարով ինձնից փոքր է։ Ինչպէ՞ս դուք, բոլոր տղամարդիկդ, հնշտութեամբ խարւում էք...։ Վերջապէս հասկանալի է, որ իշխանը հօ չի կարող բարշ գալ ամբողջ կեանքում պատւի համար... եթէ մեռաւ դուքսը, գուցէ կը ցանկանայ նա իշխանին գնալ... դու միայն ևս բևեռակայիր այդ գոյին. և նա բարձրաձայն ծիծաղեց։

—Գրողը տանի, ինչ լաւ նաչխում ես բարեկամուհուդ։

—Նա, իմ բարեկամուհին. ոքանից վերցրիր այդ։

—Նա, որ տարեկան վեց հարիւր հազար ֆրանկ եկամուտ ունի, երբէք ժտրով չէ անցրել օգնել ինձ, թէկուզ՝ երբեմն երբեմն նւիրել մի զգեստացու կամ գլխարկ... որև է անհրաժեշտ բան... մկկը այն նւէրներից, որոնք մի առանձին հաճոյք չեն պատճառում։

—Ինչպէս մեծ պապի նոր տարւայ ընծաները. օրինակ, որևէ երկրագունդ կամ քարտէզ...

(Կըշարունակւի)

Թարգմ. Աբջարեանի

Տիկին Ասաիէ հագնւում էր հայելու առաջ, ալախինը յատակի վրայ ցնսած կարկատում էր զգեստը տիրուհուն. առանց տեղից շարժւելու մայրը րուբը դէմ առաւ որդուն։

«Ծագող Արեւին» ջայնամիզ Եւրոպան առանց հովանարի չէ կարողանում ճայել.

ԴԵՊԻՆ ՎՅԱՆԳԸ

ԻՆՉՊԻՍ Է ՄԵԾԱՑԵԼ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

(Պետրոս Ա-ի ժամանակից մինչև մեր օրերը)

—

Պետրոս Ա-ի գահ բարձրանալու ժամանակ Ռուսաստանը հող ունէր Եւրոպայում ու Կովկասում 3,839,109 քառակ. վերստ, Ասիայում—8,989,039 քառ. վերստ. Պետրոս Ա-ի թագաւորութեան ժամանակ երկրները ևս ձեռք բերուած Եւրոպայում – 220,406 քառակ. վերստ, և Ասիայում – 343,678 քառակ. վերստ։

1726 թուից մինչև Եկատերինա II-ի թագաւորութիւնը (1762 թ.) Ռուսաստանը մեծացաւ Եւրոպայում 76,656 քառակ. վերստով և Ասիայում—879,221 քառ. վերստով։

Կայսրուհի Եկատերինա II-ի թագաւորութեան ժամանակ Ռուսաստանի կալուածները Եւրոպայում մեծացան 546,600 քառ. վերստով. միացան Ղրիմը, Կուրանի երկիրը, Վոլինը, Պոդոլիան, Մինսկի, Դրօդնենսկի, Վիտեբսկի և Կովենսկի նահանգները, Կուրլեանդական դքսութիւնը։ Կայսր Պաւէլի թագաւորութեան ժամանակ Ռուսաստանի հպատակութեան է ընդունուած Վրաստանը (44,585 քառակ. վեր.)։ Կայսր Ալէքսանդր I-ի ժամանակ միացած են երկրները Եւրոպայում 427,340 քառ. վեր. և Ասիայում 5,503 քառ. վեր.։ Կայսր Նիկոլայ I-ի ժամանակ Ռուսաստանի հողերը մեծացան 84,036 քառ. վերստով պէխաւորապէս Կովկասում և Անդրկովկասում։

Կայսր Ալէքսանդր II-ի թագաւորութեան ժամանակ Ռուսաստանը ձեռք բերից—655,227 քառ. վեր.։ Կայսր Ալէքսանդր III-ի ժամանակ միացել են հողեր Ասիայում—214,854 քառ. վեր. *(Կը շարունակուի յետոյ)*։

XX-րդ դարի սկզբում Ռուսաստանի տիրապետութիւնները բռնում էին Եւրոպայում ու Ասիայում 19,713,153 քառ. վեր. տարածութիւն։

---

*
* *

Թե իմ աչերս փարոս դառնային
Լուսաւորելու փրկարարանդ ուղին
Եւ կեանքի աճեղ ալիք յարձանից
Առաջնորդին ձեզ ի ապահաս,—

Սիրակոն իմ ազգ, չեի վատանիլ,
Ձեզ ի սմար իմ զոյգ աչերս վատել։

Լ Է Օ Ն Է Դ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ

—

Մարկ Տուէնը եւ բարեգործական բաց ճեմարանները Նիւ-Եօրկայի մի քանի բարեբարեխիղճ-միլիոնատէր պիտոյին ամերիկական յայտնի երգիծաբան Մարկ Տուէնին, խնդրելով նրէք տալ իրենց հիմնած ապաստարանի օգտին «Թժգադարար, ես այժմ ոչինչ չունեմ, բացի պարտքերից և փառքից» պատասխանեց Մարկ Տուէնը, որը, ինչպէս յայտնի է, մօտերս կորցրեց իր ամբողջ կարողութիւնը։ «Բայց,—աւելացնում էր Տուէնը,—ես այնուամենայնիւ ցանկանում եմ մի բան տալ ապաստարանին»։ Եւ, վերցնելով սեղանից մի բաց նամակ պատասխանով, Տուէնը գրեց նրա վրայ իր հասցէն և պարտատերութիւն, որ իրեն այդ նամակն ուղարկողին նա իսկոյն կը պատասխանի միայն պատասխանի բացակով, այսինքն կուղարկի իր ձեռագիրը։ «Մտածեցէք այս նամակը 10 դոլարով,—գրել էր Տուէնը,—ահա և դուք կը տատանուք իմ լուսանցքում։ Երգիծաբանի նամակը հէնց նոյն օրը գնեց երեւելի միլիոնատէր Վանդերբիլդը և ուղարկեց Մարկ Տուէնին։ Երգիծաբանի պատասխանը չուշացաւ. հետեւեալ օրը միլիոնատէրը ստացաւ այդ ձեռագիրը, որի մէջ գրուած էր. «Այս նամակը ստանալուն պէս բռնեցէք վճարել նոր ապաստարանին, իբրև համակրանք զէպի ինձ, հազար դոլար։ Մարկ Տուէնը Վանդերբիլդը իսկոյն վճարեց նշանաւոր երգիծաբանի այդ արտասովոր փոխանակագիր-ձեռագրի գումարը, իսկ այդ «փոխանակագիրը» նա պահեց նրա ձեռագրերի ժողովածւի համար։

ՏԱՐԱԶԻ ներկայ №-ը բաղկացած է երկու կրկնակի թերթերից, *16* երես։ ՏԱՐԱԶԻ հետեւեալ №-ը լոյս կը տեսնի կիրակի, յունուարի *16*-ին։

XVI տ. № 1 **1905** թ. շաբաթ 1 յունուարի

ՏԱՐԱԶ ուղարկւում է նրանց, որոնք վերանորոգել են իրանց բաժանորդագրութիւնը և վճարել։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ. **Տարազ պատկերազարդ.** ՆԿԱՐՆԵՐ Տէրտնական բնտանիքը—Թաթէոս։ Նոր տարւայ գիմակ։ Կապիտան Կլագօ։ Ճապան. Կարմիր խաչի ծառ. Ճապոն զօրքը բարձունք. վրայ։ Ռուս գերեակ և հետեւող սպաները Դայնում։ Տարեմուտ Եւրոպայի նոր տարին հոգեհանգստում է կայսեր Ճապոնը։ Կոմս Կանուրի Ինուէ։ Ի. Մատաուս։ Հովիւները երեչտակների հետ «Աւետիս են երգում Տ. Մատթէոս ութիկ. Իգմիրլեան։ Այժմեան իսրայէլացիք Երուսաղէմում։ Անմոռանք (3 նկար)։ Դեղին վտանգը։ Նիւթ։ Նոր տարին (ոտանաւոր) Յակ. Յակոբեան։ *1* Յունուար *1905* թ. Ս. Յակ.։ Մաքի քևեբում—Ֆ. Փար-եան. Մանկական խաղերը Ճապանիայում—Մ. Փիրվերդ։ Անցեալ հին տարին (ոտանաւոր)—Գ. Բարխուդարեան։ Նոր տարւայ այցելութիւնները.—Յ. Պատենեան։ Անմահը (վէպ. Ալֆ. Դոդէի) թարգմ. Աբեղեանի։ Ինչպէս է մեծացել ռուսաց թագաւորութիւնը։ *** (ոտանաւոր)—Լ.Օնիլ։ Մարկ Տէէնը և բարեգործ. բաց նամակներ։ **Տարազ-ը ազիւ.** Գրական շաբաթաթերթի կարեւորութիւնը—Իս. Յարութիւնեան։ Մեր թղթակիցները։ Վերելնիից—Հովիւ։ Նամակ խմբագրութեան—Թիֆլիսից—Ներս. դպր. ուսուցիչ։ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ. Գրականութիւն և մամուլ։ Գեղարւեստական քրոնիկ։ Ժամանակագրութիւն։ Բագէի զործադուլը։ Ռուսական սուբսանդակ։ Արտասահմ. քրոնիկոն։ Նորագոյն հրատարակութիւններ։ Պատերազմ—հետագիրներ։ ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ. Նոր տարւայ սիւրպրիզները—Woreuիus։ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ. Մրտեղ է մանկական երեւակայութեան հիմքը—Տ. Պատմանեան։ ԹԱՏՐՈՆԱԿԱՆ. Պատի նամար. գրամա 4 գործող. հեղ. Շիրվանզադէի (լիբրետտօ)։ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ. Տէր մեզ առողջ սերունդներ-բժշ. Արտ. Շեհան։ ԱՅԼԵՒԱՅԼԻ. Մկնդեղը մարդկային մարմնի մէջ։ Լաւագոյն հիւանդանոց։ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԳՐԱԿԱՆ ՇԱՐԱԹԱԹԵՐԹԻ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

—

Քաղաքակրթութեան ուղիղ շաւղի վրայ գտնուող և կենսունակ ժողովրդի անհրաժեշտ պահանջներից մէկը գրականութիւնն է. առանց գրականութեան այժմ ոչ մի ազգ չի կարող իր գոյութիւնը պահպանել—հարկաւ մեր խօսքը չէ վերաբերում կիսավայրենի քրդերին ու դրանց նման յետամնաց ժողովուրդներին, որոնք գոհ են միայն իրենց վարած բուսական կեանքով։

Գրականութիւնը իւրաքանչիւր ազգի ինտելիգենտ անհատների մտքի ծնունդն է. որչափ մի ազգ քաղաքակրթուած է, այնչափ էլ նրա գրականութիւնը զարգացման բարձր աստիճանի վրայ կըլինի կանգնած։ Գրականութիւնը մտածող մարդկանց հոգեկան արտայայտութիւնների անպղտար ձուլմն է. զուրկ լինել գրականութիւնից, միևնոյն է թէ՝ զուրկ լինել հոգեկան կամ մտաւոր կեանքից։ Մտաւոր կեանքով ապրողը չէ կարող առանց գրականութեան մնալ. ով գրականութիւն չէ սիրում, նա մտաւոր կեանքից փախուստ է տալիս, պահանջ չէ զգում իր միտքը զարգացնելու, ուրիշին և քաղաքակրթելու։

Գրականութիւնը զգոյշ զազափարի ընդարձակումն է, նոյն զգոյշն է՝ ամէն լայն մտքով. ինչպէս զգոյշը, այնպէս էլ գրականութիւնը, ուսուցանում, զարգացնում են մարդուս հոգեկան ընդունակութիւնները, կրթում, ազնւացնում են հասարակութեան բարքը, ներշնչում են զազափարներ, իդէալներ, վեհ նշանակութիւն են տալիս մարդուս գոյութեանը։ Գրքոյում մարդիկ կրթւում են՝ մանկական, պատանեկական և երիտասարդական հասակում. գրականութիւնը աւելի առաջ է անցնում և ուսուցանում նոյն իսկ այրական և ծերութեան հասակում։ Գրքոյն ու գրականութիւնը ձեռք ձեռքի տուած՝ կառուցանում են այն հայեացական շէնքը, որ քաղաքակրթութիւն է կոչւում. ազգերի գոյութեան կուռ քաղաքակրթութիւնն է յաղթող հանդիսացողը և ոչ թէ կոպիտ ոյժը։

Այն օրից, երբ հանճարեղ ս. Մեսրոպը կազմակերպեց հայոց այբուբենը, հիմք դրեց հայ գրականութեան—հայ քաղաքական հայ գրականութեան ինդիրը ցայժմ պարզած չէ—և պատճառն կերպարանափոխութիւններով շարունակւում է այսօր էլ. այդ կերպարանափոխութիւնները տեղի էին ունենում համեմատ ժամանակի պահանջի, թէ արտաքուստ և թէ ներքուստ։ Նախնի դարերում գրականութիւնը ինչպէս մեզ մօտ, այնպէս էլ ամեն տեղ, սահմանափակ շրջանի հասար էր և իսկապէս բուն ժողովրդի կարիքներին չէր ծառայում. այս պատճառով էլ շատ տեղ ժողովրդին անհասկանալի լեզուով էր գրուած։ Միջին դարերում ամբողջ Եւրոպայում իշխող էր հանդիսանում լատիներէն գրականութիւնը (պետական), թէև ժողովուրդները այդ լեզուն չէին հասկանում. մեզանում էլ սկզբից մինչև 19-րդ դարի կէսերը գրաբար գրականութիւնն էր իշխողը, սակայն յիսնական թուականներից սկսած, երբ մեր մէջ էլ մուտք գործեցին եւրոպական նոր զազափարները և ուսումն ու կրթութիւնը հասարակ ընդհանուրի բարիք և ոչ թէ մի որոշ դասակարգի սեպհականութիւն, գրականութիւնն էլ չէր կարող սահմանափակ շրջանի մէջ մնալ։ Հայ բուն ժողովուրդն այլ ևս չէր հասկանում գրաբարը, հետևաբար և գրականութիւնը պէտք է փոխադրէր աշխարհաբարի. հայ ժողովրդի օգտի տգոտուած Խաչատուր Աբովեանը վեց տկիկ կերպով ըմբռնեց ժամանակակից այդ պահանջը և կարելի է ասել, որ նա եղաւ մեր աշխարհաբար գրականութեան հիմնադիրը։ Աշխարհաբար գրականութիւնը հարկաւ այլ ևս հին ուղղութեամբ չէր կարող առաջ գնալ և պէտք է ներքուստ էլ կերպարանափոխուէր՝ որպէսզի իր նպատակին ծառայէր։ Հետզհետէ գրքոյնների թիւը շատանալով և գրպիտութիւնն աւելի ընդարձակ ծաւալ ստանալով՝ նոր գրականութեան նշանակութիւնն էլ բարձրացաւ. տպագրւած գրքերն այլ ևս միմիայն կրօնական բովանդակութիւն չունէին. լոյս տեսան ժողովրդական հրատարակութիւններ և իրենց պարունակութեամբ քիչ թէ շատ ընդհանուրին մատչելի գրւածքներ։ Եւ որվհետև այդ միջոցին եւրոպական գրականութեան մի որոշ ճիւղը, պարբերական մամուլը, արդէն սկսել էր մեծ նշանակութիւն ստանալ, մեզանում էլ ժողովրդի միտքը զար-

ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ

ՆՈՐ ՏԱՐՒԱՅ ՍԻՒՐՊՐԻԶՆԵՐ

I

(Կոլոմբի առակներից)

Պ. Ալպիաճեանի

Համա մէթէլ թեթև բան
Կերևայ այս այլ քեզի,
Որ քու փնարիկ ձայնը շատ ու շատ դարեր
կը լսի,
Իսկ մեծատան անունը՝ չ'ըսեմ քոռան քոռները,
Հապա թոռներն ալ կը ժռռան, և նոյն իսկ
զաւկընները։

(Մեծատուն և բանաստեղծ)

«Աւտոյապահիկ թերթին»

Վայ ան խորտկին,
Որ կօշկակարն է հիւր,
Վայ ան կօշկին,
Որ խոհարարն է կարեր։

(Պատուհանակ եւ կատու)

Լ. Է օ ի ն

Պարապ տոպրակ մը քաշ կուպար,
Ցեխոտ ոտքերը սրբելու ձեռք կուտար։
Չեմ գիտեր, ինչպէս եղաւ,
Մեր տոպրակը պատուոյ հասաւ.
Թիստ փըչեցաւ ու տըկտեցաւ,
Լեզուն բացուեցաւ, երկընցաւ,
Ամեն բանի վերայ ալ դատումներ ըսկըսաւ.
«Ադ ատանկ չէ, ատանկ է.
Ադ մարդը մարդ չէ, էշ է,
Մէկալին եաքը զէշ է...»
Հարցուր տոպրակին, թէ ինչն ինչ է։

(Տոպրակ)

«Մշակին»

Քաջ երաժիշտ ով որ կաւելնայ,
Պէտք է փափուկ ականջ ու խելք ունենայ.
Դուք, աղբարներ, ինչպէս կուզէք շարւեցէք,
Քօնսեռ սարքել ձեր բանը չէ, լաւ գիտցէք։

(Կատրես)

Յովհաննէս Թումանեանի

Բայց մեր գորտը նորէն ամբան փչեցաւ ու փչեցաւ,
Որ վերջապէս ճաքեցաւ։

(Գոռ եւ հզ)

Նար-Դոսի

Մարդկանց առջև պատիւ գտնել թէ կուզես,
Բարեկամներդ նայէ, որ լաւ ընտրես։

(Թիւրկական եւ օձ)

Շիրվանզադէի

Իրաւ, հազիւ տասը քայլ
Մարդիկն առաջ որ գնացին,—
Շնորհն իրար նայելով՝
Ձայներնին ալ կտրեցին։

(Անցորդ եւ տուճ)

Օր. Պապայեանի

Որ քանքարէն որ աշխարհիս շահ չը կայ,
Ես այն քանքարն անշահ կըսեմ և անպէտ,
Թէպէտ
Երբեմն աշխարհս անոր վրայ զարմանայ։

(Մանուկ եւ մեղու)

Պ. Պուշեանցի

Աահնով փիղը տեր փղոցնորէն կանցնէին,
Շատ մը ժողովուրդ փղին հետ մկնիկ կը քալէին։
Անդիէն տասնց առջև քոխոխ մ'ելաւ խիստ կուտակը,
Տեսնէին՝ ինչ կանչ ու ձիչ, ինչպէս նաջէը ու կոտրտուէը,
Անպատճառ փղին վախ տալ կուզէր խելքովնին ոդորմելին...

(Փիղ եւ հոտոտ)

Տ. Յ.-եան

Դուռ ոմ ես ու փիղն ոմ.
Անա քու տնդպ է ըռներ,
Իսկ նա հանդարտ ու անխռով՝
Հաչածդիդ ուշ ալ չի գներ։

(Փիղ եւ հոտոտ)

«Տարազին»

Զքիզ ալ փրկէ Տէր Աստուած
Կոշտ ու կոպիտ դատաւորայ։

(Լուս եւ սպիտակ)

Վ. Փափազեանի

Անդան կաղին ձըթկկացաւ ապտն խոզերուն մկկը,
Որ վերջապէս կշտացաւ ու տկտկացաւ,
Աղկկ քուն մը քաշելէն ետքը զարթնեցաւ
Եւ սկսաւ կաղնիին տակը փորել քիթովը։

(Կաղնիին տակի խոզը)

II

Մեր օրիորդներին

(Յարութիւն Թումանեանից)

Դուռ, նորասէր, ազատամիտ
Ու գեկատնտա օրիորդներ,

գացնելու համար՝ սկսեցին երևան գալ պարբերական հրատարակութիւններ՝ ամսագրեր և շաբաթաթերթեր։

Այժմ, երբ պարբերական մամուլը Եւրոպայում իր նշանակութեան համարեա գագաթնակէտին է հասել և հոծ ներորդ մեծ պետութիւն մականուան արժանացել, մեղանում, տարաբաղդաբար, համապատասխան չափով չէ առաջադիմել գրականութեան այդ հանրամատչելի ճիւղը. ընդամենն ունինք մի օրաթերթ, մի շաբաթաթերթ և մի ամսագիր—երկրորդը, «Այբիւրը», միայն մանկական հանդէս է։—Մեր նպատակը չէ այստեղ եղածների որակութեան մասին խօսելը և ոչ էլ այդ իրողութեան պատճառների քննելը։

Գրականութեան ազնւացնող ազդեցութիւնն ընդհանուրի լաւին պարզելու առնելու միջոցը՝ պարբերական մամուլն է, որ գլխաւորապէս երեք ձևով է արտայայտւում. օրաթերթ—քաղաքական, հասարակական առօրեայ խնդիրներ լուծելու համար, շաբաթաթերթ—գրական, հասարակական և քննադատական ուղղութեամբ և ամսագրեր—նոյն խնդիրներն աւելի լուրջ և ընդարձակ կերպով պարզաբանելու համար։ Այս երեք տեսակի պարունակութեան մէջ են դնում նաև գեղեցիկ գրականութիւնը, պիտութիւնը, գեղարուեստը և այլն. մանրագիտական թերթերն իրենց որոշ սահմանն ունեն։

Տարազ շաբաթաթերթն իր այժմեան ծրագրով լիովին համապատասխանում է մեր պահանջներին. ինուում է, որ հայ հասարակութիւնը գիտակցաբար վերաբերի գործին և միջոց տայ նրան հետզհետէ աւելի կատարելագործելու և մաքուր գրականութեան ազնացնող ազդեցութիւնը տարածելու իր ընթերցողների վրայ։

Խահակ Ճարուքեանց

Մեր թղթակիցները

—

Դերբենդ, 24 դեկ.

Մենք, անցեալ անգամ խօսելով շէրջուն դերասանների այն սիպի մասին, որոնք ներկայացումներ են տալիս տեղական ուժերի օժանդակութեամբ, ի միջի այլոց արտայայտեցինք այն միտքը, թէ ներկայացումը լիովին յաջողեցնելու համար մի դերասանը բաւական չէ, ցանկալի է, որ նրանք բաղկացած լինին փոքրիկ խմբակներից։

Այժմ մի քանի խօսք նւիրենք կազմակերպած կանոնաւոր դերասանական խմբերի ճանապարհորդութիւններին։

Մեր գաւառական քաղաքների մեծամասնութիւնը, թէ իրենց անտեսական դրութեամբ և թէ մտաւոր ու բարոյական տեսր տասկացողութեամբ, տակաւին անկարող են ըստ ևրևոյթին բեղմնաւոր ու արդիւնաւէտ գործընել կանոնաւոր խմբերի շրջագայութիւնը։

Մի տեղ ժողովուրդն աղքատ է նիւթապէս, մի ուրիշ տեղ թիւր տասկացողութիւն ունի թատրոնի մասին՝ կարծելով թէ թատրոնը միայն պէտք է զարմացնէ. յաճախ լուրջ խոչընդոտ է հանդիսանում ճանապարհների անյարմարութիւնը, կեանքի թանկութիւնը և վերջապէս իրենց՝ դերասանական խմբերի միջև տեղի ունեցող անհամուրիւնները։

Այսպէս թէ այնպէս, եթէ կան այսօր շրջագայող խմբեր, նշանակում է թէ՝ հայկական ներկայ իրականութիւնը իր դրական և բացասական կողմերով այնուամենայնիւ հնարաւոր է դարձնում նրանց գոյութիւնն ու գործունէութիւնը գաւառում։

Գաւառը, եթէ յաճախ անկարող է նիւթապէս ըստ արժանոյն գնահատել իր հիւրընկալած դերասաններին, դրա փոխարէն նա խիստ առատ է բարոյական վարձատրութեան և խրախուսանքի մէջ։

Այո, եթէ կամենում էք, մենք պատասխանեցինք սովոր ենք մի առանձին երկիւղածութեամբ վերաբերել դէպի մեր յայտնի, անուն հանած և արդէն որոշ դիրք գրաւած բեմական ու ազգային այլ գործիչները։ Այս կողմից մենք կատարեալ պատասխաններ ենք նոյն հասակին յատուկ անկեղծ ոգևորութեամբ և չափազանց ծայրահեղութիւններով։

Ուրեմն կարող էք դուք երևակայել ձեզ, թէ որպիսի բուռն ոգևորութեամբ մենք ընդունեցինք մեր քաղաքում տ. Մայսուրեանին և պ. Աբէլեանին իրենց խմբով՝ բաղկացած 11 հոգուց։

Ուսմբը տասն օրւայ ընթացքում ունեց երեք ներկայացում. խաղացին «Ծարդասանիբ և սեր» Շիլլերի, «Otello» և ամսոյս 20-ին տիկին Մայսուրեանի բենեֆիսին «Տրիլբի»։ Ժողովրդի մեծամասնութեան աւելի դիւր եկաւ այս վերջինը, և շատերի կարծիքով աղքատ երաժիշտ Սվենգալի դերը պ. Աբէլեանը ոչ թէ խաղում, այլ ուղղակի ստեղծագործում էր. իսկ տիկին Մայսուրեանը Տրիլբիի դերում մարմնի և հոգու այնպիսի քնքշութիւն ու ճկունութիւն արտայայտեց, էստետիքական այնպիսի մեծ հաճոյք պատճառեց հանդիսատես հասարակութեանը, որ մենք այլևս անկարող ենք մոռանալ նրան։ Պ. Աւետեանը դիւր եկաւ ժողովրդին իր բոլորովին բնական խաղով. ինչպէս երևում է, բեմը նրա կեանքի մի որոշ մասն է դարձել։

Սակայն ես այստեղ կամենում եմ խոսս տալ դերասանների խաղի մասին ընթերցողիր ուշադրութեան արանքով վիտելու մտքից. ես ուզում եմ չեմ գրում, այլ պարզապես սոսկ հանդիսատես իմ անձնական տպաւորութիւններն ու խորհրդածութիւնները եմ առաջ բերում. և իրօք, մի գաւառացի ինչ շիւղ կամ ծաղիկ կարող է աւելացնել այն դափնիներին, որ այն, քան պանծալի վեհութեամբ իրենց ճակատների վրայ կրում են Աբէլեանն ու Մայսուրեանը։

Դերբենդի հայ հասարակութիւնը պատւեց դերասաններին որոշ ծախսարութիւններով, բացի բեմ կոչելով նրանց և այլ համակրական ցոյցերով, և կարծում ենք, որ հասարակական գործի համար բարոյական խրախուսանքը նիւթական վարձատրութիւնից պակաս նշանակութիւն չէ պիտի ունենայ։

Բացի այդ՝ վերջին ներկայացման ժամանակ պ. Աբէլեանը սառցաւ տիկին Բաբայեանից մի ադամանդեայ գնդասեղ փողպատի վրայ կրելու, իսկ տիկին Մայսուրեանը՝ ներկայ եղող հասարակութեան կողմից մի գաւաթ, որ ժողովեց տեղն ու տեղը։

Ուսմբը ճանապարհեց ամսոյս 21-ին դէպի Թիֆլիս։ Գնացէք խաղաղութեամբ, ազգի քրտնաջան մշակներ, ձեզ հետ է մեր սէրն ու համակրանքը և այն յոյսը, որ դուք ևս մեզ չէք մոռանալ բոլորովին։

Հովիւ

Նամակ խմբագրութեան

—

Թիֆլիս, 27 դեկտեմբ.

Թոյլ տուէք, խնդրեմ. երկտող հրատարակել «Տարազ»-ի էջերում։

Ամսոյս 26-ին, կիրակի օրը, գնացել էի Զրկինենց կոչած եկեղեցին, հանգուցեալ բժշկապետ և հասարակական գործիչ Ստեփաննոս Անանեանցի յու-

---

Երեկոյթի, ցերեկոյթի,
Թատրոնների թիթեռներ.
Դուք, գաշնամուրը, դիմպիլիպիաօ
Ու գահիրա ածողներ.
Վայլս, մազուրկա, ուզունդարա
Ու լեկուրի պարողներ.
Սուրբ-Սարգսի, Փեթխայինի
Օքանների աղջիկներ,
Մուշտայիդի, Մամա-Դաւթի,
Մութ տեղերի չղջիկներ,—
Մի ծիծաղէք, ո՛, մի ծաղրէք
Դիւլիջանին աննման.
Նա չէր կարող երբէք լինել
«Ազատամիս» ձեզ նման։

(«Մուսա», II նւագ)

Մօրալիս

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

—

Որտեղ է մանկական երեւակայութեան հիմքը

Բարեկամ, մարդկութիւնը իր քաղաքակիրթ ազգերով ու ժողովուրդներով շատ և շատ հին ժամանակներում այնպէս չէ եղել, ինչպէս հիմա ենք տեսնում. հազարաւոր տարիներ միգանից առաջ բոլոր մարդիկ անտառներում, դէս-դէն, այս փոսում, այն փոսում, այս ու այն մալարայում ապրող վայրենիներ են եղել, բոլորովին մերկ, կիսամերկ, համարեա կենդանական կեանք անցկացնող արարածներ։ Այդ մեր վայրենի նախնիքները, ուզում եմ ասեմ՝ Ադամն ու Եւան իր Թոռներով ու ծոռներով, բաւականին նման են եղել այժմեան կիսավայրենիներին։ Մեր նախնիքները շատ անգամ սոխլած էին լինում կռիւ տալ կատաղի գազանների և իրենց նման վայրենիների հետ. նրանց զէնքն էր ծառի մի հաստ ճիւղ, մի քար, կենդանու հաստ ոսկր. նրանք իրենց կերակուրը ճարելու համար՝ որսում, սպանում էին տեսակ-տեսակ կենդանիներ. նրանց կեանքը անվերջ կռիւ էր միմեանց դէմ, կենդանիների դէմ։ Գոյութեան ամենախիստ կռիւ ժամանակ որքան էլ կինը սկզբում թէև ու թիկունք լինէր տղամարդուն, էլի կնոջը մի որոշ ժամանակ՝ զաւակների խնամատարութեան համար անպատճառ հարկաւոր էր խաղաղ կեանք տան չորս պատերի մէջ, թէկուզ այդ տունը լինէր ծառերի վրայ, մի փոսում, մալարայում, մի խրճիթում և այլն։ Ահա այս բանը երկար դարեր, հազարաւոր տարիներ շարունակելով՝ դարձել է մի տեսակ սովորութիւն, մի տեսակ բնազդ. այդ սովորութիւնն ու բնազդը անցել է պապից-պապ, տատից-տատ, թոռից-թոռ, որդուց-որդի և եկել հասել է մինչև մեր օրերը։ Հէնց այդ սովորութիւնն է, հէնց այդ բնազդն է, որ երևում է Հայկիդ, Նազիկիդ և Օնիկի մէջ։ Տղաները՝ ապա ուրեմն Հայկդ և Օնիկը, երևակայական խաղերով ու ձգտումներով նման են իրենց հօրը, աւելի շուտ պապիպապերին. աղջիկներն էլ, ի հարկէ և Նազիկդ, նման են իրենց մօրը կամ տատիտատերին։

Ինչպէս վայրենի մարդկութիւնը կամաց-կամաց է հասել կիսավայրենի և քաղաքակրթուած դրութիւններին, այնպէս էլ ամեն մի երեխայ մինչև իր կատարեալ հասակը՝ վայրենի, կիսավայրենի և քաղաքակիրթ մարդու կերպարանք է առնում հետզհետէ և բոլորովին իրենից անկախ. դա կատարւում է նախնիքներից ժառանգած ընազդի ու տրամաբանութիւնների շնորհով։

Պարզ է, որ Նազիկիդ, Հայկիդ և Օնիկի ածծերի, երևակայութեան հիմքն ու զանազանութիւնը հեռու, շատ հեռու անցեալի մէջն է. այդ բոլորի սկիզբը գտնւում է նրանց պապիպապերի, նրանց տատիտատերի կեանքի մէջ։

Երբ մանկական երևակայութեան հիմքը դրւած է շատ և շատ հին ժամանակներից, ուրեմն կարող ենք ասել, որ մեր առաջ կանգնած է հազարաւոր տարիների ժառանգական օրէնք։ Այս օրէնքին կարող են ուժ տալ մեր կեանքի ներկայ պայմանները. երեխաների երևակայութեան համար նշանակութիւն ունին թէ հասակաւորների, թէ խաղընկերների ածծերը և թէ առհասարակ շրջապատող հանգամանքները։ Էլ ո՛ր հայրը, ո՛ր մայրը, ո՛ր ուսուցիչն ու վարժուհին կարող են մի անգամից, մի մատի հարուածով խորտակել ու փշրել հազարաւոր տարիների օրէնքը, ուժեղ օրէնքը։

Ինձ սխալ չը հասկանաս, թէ մարդկային կեանքն ու ժառանգական օրէնքը անփոփոխ բան են, ոչ. ինչպէս վայրենի մարդկութիւնը կամաց-կամաց պարզանալով հկել հասել է մեր օրւան, այնպէս էլ սրանից յետոյ կը շարունակէ անվերջ առաջ գնալ, քանի նա գոյութիւն ունի, քանի նա կայ աշխարհիս երեսին։ Միայն պիտի գիտենալ, որ այդ յառաջադիմութիւնը, այդ փոփոխութիւնը կը կատարւի հետզհետէ և ոչ միանգամից։ Պիտի փոխւի մեր ժառանգաւոր, ընկերական, ընտանեկան ու հասարակական կեանքը, պիտի փոխւենք մենք. այնուհետև կամաց-կամաց կը փոխւեն մեր սովորութիւնները, բնազդները. առաջ կը գան նոր ձգտումներ, նոր ցանկութիւններ, նոր սովորութիւններ. սրանք երկար ժամանակ սերունդից սերունդ անցնելով, անկասկած կը ձևափոխեն ապագայ մարդու, ուրեմն և ապագայ մանկան երևակայութիւնը։

Թողնենք հետաւոր ապագան. հիմա մեզ նա-

զարկաւորութեանը։ Երբ կանգնած էի եկեղեցու փոքրիկ նախագաւթում, ինձ մօտեցան Ներսիսեան դպրանոցի մի քանի աշակերտներ՝ ժամաշապիկները ձեռքներին—երդեցիկ խմբից էին—և յայտնեցին, որ իրենք ուզում են եկեղեցի մտնել, բայց դռների մէջը կանգնած մի պարոն թոյլ չէ տալիս։

Եկեղեցու դռների մէջ կանգնած էր մի տղւած պարոն, եթէ չեմ սխալւում, ինժիների տօնական հագուստով և ամբ քէֆը տալիս էր՝ թողնում էր, որ եկեղեցի մտնեն, իսկ միւսներին թոյլ չէր տալիս՝ ասելով թէ տեղ չկայ։ Ես մօտեցայ ինձ անծանօթ պարոնին և խնդրեցի թոյլ տալ, որ աշակերտներն եկեղեցի մտնեն, բացատրելով թէ նրանք նեղսը երգող խմբի անդամներն են և պարտաւոր են երգել։ Պարոնն ինձ էլ մերժեց և կրկին թոյլ չըտուեց, որ աշակերտները ներս մտնէին. տեղը և ժամանակն ի նկատի ունենալով, ես հարկաւ չըպնդեցի և չըվիճեցի այդ ինքնիշխան պարոնի հետ և մի կողմը կանգնած դիտում էի՝ թէ նա ինչպէս յետ քաշւելով ու յարգանքով թոյլ ուտեց, որ մի քանի խումբ տիկնայք և պարոններ եկեղեցի մտնեն։

Արդ՝ ո՞վ էր այդ պարոնը, ինչ իրաւունք ունէր նա եկեղեցու դուռը կարելու և մէկին թոյլ տալու, որ ներս գնայ, իսկ միւսին արգելք լինելու. արդեօք կարգապահ ոստիկանի կամ ժանդարմի պաշտօն էր կատարում՝ թէ դռնապանի։ Ճիշտ է, եկեղեցին փոքր և շատ անշուք է, որ պատիւ չէ բերում նրա շատ ժեծանուն և հարուստ ծխերին, բայց եկեղեցու գաւիթը լիքն էր զուտ ինտելիգենտ հասարակութեամբ, որոնք կարգապահ ոստիկանի կարիք բոլորովին չունէին։ Եկեղեցի մտնողն ինքն էլ տեսնելով նեղւածք լինելը, մի լոյկ կանգնում, երեսը խաչ էր հանում և դուրս գալիս։ Մեր եկեղեցական մեծ ծօներին տաճարները միշտ լի են լինում ահագին բազմութեամբ և չընայելով, որ մեծ մասը հասարակ ժողովուրդ է լինում, այնուամենայնիւ կարգապահ ոստիկանի կարիք չէ լինում և երբէք էլ անկարգութիւններ տեղի չեն ունենում, որովհետև ամենքը պատկառում են սրբավայրից։

Մեր եկեղեցին—ինչպէս և ուրիշ եկեղեցիները—ազատ և ժողովրդական եկեղեցի է և երբէք խտրութիւն չէ դնում մեծի ու փոքրի, հարստի ու աղքատի, լաւ ու վատ հագնւածի մէջ. ամենքը հաւասար իրաւունք ունին այդտեղ Աստուծուն աղօթելու։ Զրկիննոց եկեղեցու ինքնիշխան կարգապահը եթէ նոյն իսկ բարի յանկութիւն ունենար ծառայութիւն մատուցանելու արդէն եկեղեցուհի եղածներին, գոնէ ամենքի վերաբերութեամբ նոյն կերպ պէտք է վարւէր և ոչ թէ իր ծանօթին թողնէր, իսկ անծանօթին՝ ոչ, գոնէ այնքան հասկացողութիւն պէտք է ունենար, որ ոչ մի դէպքում չի կարելի արգելել եկեղեցու պաշտօնական եկեղեցի մտնել. իսկ ժամաշապիկը ձեռքին կանգնած պատանիները իրենց պարտականութիւնը պէտք է կատարէին։

Այդ եկեղեցու երեսփոխանի պարտքն էր՝ թոյլ չըտալ այդպիսի ինքնիշխան վարմունք։

Ներսիսեան դպրանոցի ուսուցիչ։

Վնասատական

ԴՐԱԿԱՆՈՓԻՆ ԵՒ ՄԱՄՄՈՒԼ

«Новости»-ն մատնանշել է անում Ռուսիայի յետաքննութիւնը նոյն իսկ օրացոյցի մէջ։ Այն ժամանակ, երբ Արեմտեան Եւրոպան արդէն մուտք է լինում նոր տարին, Ռուսիան Ծնունդն էլ դեռ տօնած չի լինում։ Լրագիրը պահանջում է դէն ձգել հին տումարը և ընդունել նորը, որն անհրաժեշտ է Արեմտեան Եւրոպայի հետ ունեցած զուտ գործնական յարաբերութիւնները դիւրացնելու համար։

Արեմուտքում, ինչպէս յայտնի է, նոր տումարը սահմանւեց Նրանով, որ հին վոյ պարզապէս աւելացրին 10 օր, այսինքն 1582 թւի հոկտեմբերի 5-ից անցան հոկտեմբերի 15-ին՝ ուղղելու համար օրահաշւի այն սխալը, որ գոյացել էր յուլիանեան օրացոյցի սահմանումից ի վեր տարւայ տեւողութիւնը չափականց անճիշտ որոշած լինելու պատճառով։ Ընդամին ժամանակով նոյնպիսի անճշտութեան առաջն առնելու համար սահմանւեց, որ ապագայ մի քանի տարիներում նահանջ տարիները հաշււեն իբրև հասարակ տարիներ։

Ինչո՞ւ մեզնում ևս չի կարող պաշտօնապէս սահմանւել, որ աշխարհական կեանքի մէջ այն ամսի 1-ից յետոյ, որը կընդունի այդ բանի համար, օրինակ հէնց թէկուզ 1905 թւի մարտի 1-ից յետոյ, հետևեալ ամսաթիւը անւանւի 14. այս պարզ ձևը, ինչպէս արդէն ասացինք, գործադրւած էր Արևմտեան Եւրոպայում նոր տումարին անցնելու համար, թէև այնտեղ այս բանը աւելի մեծ փոփոխութիւն էր կազմում, որովհետև վերաբերում էր ոչ թէ միայն աշխարհական, այլ և եկեղեցական կեանքին։

Լրագիրն աւելացնում է, որ Ռուսիայում եկեղեցական օրացոյցը կարող է ծառայել հին ձևով, մինչև որ այն ևս փոխւի պատշաճաւոր իշխանութիւնների հետ համաձայնութիւն կայացնելուց յետոյ։

* * *

«Նոր-Ջուղայի Լրաբեր» հետաքրքրական տեղեկութիւններ է հաղորդում Սինկափուրում բնակութիւն հաստատած հայերի մասին։

Սինկափուրը վաճառաշահ նաւահանգիստ է, 100 տարուց աւել կլինի, որ Ջուղայեցի հայեր Հնդկաստանից անցնելով Սինկափուր, բնակութիւն են հաստատել և վաճառականութիւն սկսել Չինաստանի ու մերձակայ կղզիների հետ։

Հայոց ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին գտնւում է քաղաքի կեդրոնում. գետինը նիւթել է անգլիական կառավարութիւնը. կառուցել է 1836 թւին։

Այս եկեղեցու շինութիւնից առաջ Սինկափուրի հայերն ունեցել են մի փոքրիկ ժամատուն. քահանայ նշանակել և ուղարկել է միշտ Ջուղայից, որպէս և այժմ։

Սինկափուրում այժմ 13 տուն հայ կայ (60 հոգի). մեծամասնութիւնը զբաղւում է վաճառականութեամբ. նրանցից բաւական յարգող վիճակի մէջ են։

Սինկափուրի բնակիչ Ջուղայեցի Տիգրան Սարգսեանն այս տարի շինել է տւել եկեղեցւոյ սեղանն ու աստիճանները մարմարեայ քարերով։ Իսկ «Մանուչեանց և Պօղոս Ընկերութիւն» վաճառատունը եկեղեցւոյ ամբողջ յատակը նոյնպէս մարմարեայ քարերով։

Մի քանի ամիս առաջ Սինկափուրում վախճանւեց Ջուղայեցի Յովհաննէս Շահնազարեան Սարգսեան. Մեսրոպ Թաղիադեանի աշակերտներից էր։ Վերջին տարիներս իր զբաղմունքն նիւթ էր ղարձրել Ջուղայում մի հիւանդանոց հիմնելու խնդիրը։ Բոլորն ապաստում էին, որ իր մեծ կարողութիւնից մի մասը կըյատկացնի այդ նպատակի իրագործման համար։ Հաստատ աղբիւրներից տեղեկանում ենք, որ տիկին Նանայան Շ. Սարգսեանը ի յիշատակ իր ամուսնու վեց հազար մարշիլ նւիրել է եկեղեցու բակում քահանայի բնակութեան համար տուն կառուցանելու, իսկ տասն հազար մարշիլ ևս յատկացրել է Նոր-Ջուղայի ազգային հիւանդանոցի առնուն։

Գեղարուեստական frotilik

Երկուշաբթի օրւանից, ամսոյս 3-ից, Թիֆլիսում, Արտիստիկ. ընկ. Թատրոնում սկսւում են հայ դրամատիկ. խմբի ներկայացումները պ. Աբելեանի ղեկավարութեամբ։ Բեպերտւարի մէջ աչքի են ընկնում նոր պիէսներ, որոնցից առաջինը՝ պ. Շիրվանզադէի «Պատի համար» դրաման է, որով և բացւում է սեզոնը։

Ընտիր բեպերտւարը, ներդաշնակ

յինք. մենք պիտի կուենք ժառանգական ջնասակը օրէնքի դէմ, պիտի կուենք վատ սովորութիւնների, վատ ցանկութիւնների ու բնազդների դէմ. բայց ինչ միտք ունի կուել մանկական երևակայութեան դէմ. չէ որ նա օգտակար է։ Տես, Հայկ, Նաղիկ, Օնիկ և այլն բաղդատւած ու երջանիկ են, երբ տալտում են իրենց երևակայութիւնով. նրանք իրենց երևակայութիւնով ձգտում, աշխատում են կեանքի մարդիկ, պատրաստւած մարդիկ դառնալ. սրանից էլ լաւ բան։ Մի՞թէ իրաւունք ունինք սրա դէմ կուել, հակառակել։ Մէկ որ՝ միտք չունի մեր կուռը. երկրորդ, գեռ յետոյ կը տեսնենք, որ մանկական երևակայութեան օգուտները շատ շատ են. և երրորդ, եթէ ուղենանք էլ անպիտակցարար, առանց հասկանալու կուել մանկական երևակայութեան դէմ, չենք կարող, շատ անզօր ու թոյլ ենք, քանի որ նրա հիմքը շատ խոր, շատ ամուր է հաստատւած մեր հոգու անցեալի մէջ։

Տ. Պատմանեան

«ՊԱՏՈՒԻ ՀԱՄԱՐ»

պրամա 4 արարւածով, Հեղ. Շիրվանզադէի.

ԱՐԱԲԻԱՅ ԱՌԱՋԻՆ

Բեմը ներկայացնում է հարուստ կալւածատէր Անդրէաս Էլիզարեանի առանձնատեղիակը։ Դէպի ձախ Անդրէասի բնակարանը, խորքում դրսեհնակը։

Սադաթէլը, որ Անդրէասի վնոջ հղբայրն է, գլխաւոր գործակատարը և աջակիցը բոլոր խարդախութիւնների մէջ, հաշւապահ Կարինեանի հետ խօսում է խղճի և ազնւութեան մասին։ Նրա հաղմունքով մարդկանց բարօրութիւնը հիմնւած է սուի և խարեբայութեան վրայ։

Ներս է մտնում Անդրէասի երկրորդ որդին, շռայլ, անհոգ, կնամոլ Սուրէնը։ Նա դրսում է. եղբօրից վող է պահանջել իր շռայլութիւնների համար, չի ստացել։ Այժմ եկել է Սադաթէլից պահանջելու։ Բնորոշ տեսարան Սադաթէլի փողմանի վերաբերմամբ։ Երկար մերժումներից յետոյ, Սադաթէլը սափրւած տալիս է նրան մի գումար։ Նա ապտով է. նա Սուրէնին պարտք է տալիս հսկայական տոկոսիով, պայմանով, որ սատանայ նրա հօր մահից յետոյ։

Գալիս է Սուրէնի մայրը, բարի, հոգ, քրիստոնեայ Երանուհին, որ իր եղբօր և ամուսնու հալածակերն է։ Նա նախատում է որդուն, որ այնքան շռայլ և փուչ կեանք է վարում։ Սուրէնը հեգնում է նրան և հեռանում։ Վիճաբանութիւն թոյր ու եղբօր, այսինքն Երանուհու և Սադաթէլի մէջ։ Թոյրը նախատում է եղբօրը, որ այնքան փողամոլ է։ Եղբայրը նախատում է քրոջը, որ չըգիտէ ապրել, ինչպէս վայել է միլիոնատիրոջ կնոջը։

Երևում է Անդրէասը։ Նա յուզւած է։ Նրա հանդուգնակալ ընկերոջ որդին և որդիները, Օթարեանը, պահանջում է նրանից հարստութեան կէսը։ Բանն այն է, որ Օթարեանն իմացել է, որ իր կարծեցեալ բարերարը ուրիշ ոչ որ է, եթէ ոչ իր հանդուգնակալ հօր կողոպտիչը։ Անդրէաս Էլիզարեանը սկսհանել է Օթարեանի ժառանգութիւնը և փոխարէնը շպրտել է նրան մի չնչին օժանդակութիւն։ Անդրէասը գրգռւած է և իր սրտի թոյնը թափում է Երանուհու վրայ, որի սխալ դէմքի վրայ միշտ կարդում է յանդիմանութիւն և նախատինք։ Երանուհին վշտացած հեռանում է։ Անդրէասը յայտնում է Սադաթէլին, թէ այն լուրը, որ ինքը կողոպտել է իր հանգուցեալ ընկերոջն, արդէն տարածւել է քաղաքում։ Սպասւում է խայտառակութիւն և անանկութիւն։ Ի՞նչ պիտի անել Օթարեանից ազատւելու համար։

Դալիս է ինքը, երիտասարդ Օթարեանը։ Միաժամանակ ներս է մտնում և Անդրէասի մեծ որդին, Առանդուն, գործնական և հաշւադէտ ինժիներ Բաքւոյ Էլիզարեանը։ Նա արհամարհում է Օթարեանին, որն իր կողմից միշտ ատել է նրան գաղտնի։ Նա կարծում է, որ Օթարեանը դրպարտում է իր հօրը և վարւում է հետը կոպտարար։ Մինչդեռ Անդրէասը, զգալով իր յանցանքը, Օթարեանի հետ վարւում է մեղմ, շողոքորթ։ Օթարեանը նկարագրում է իր և իր մօր ու քրոջ կրած բարոյական տանջանքները ինն տարի շարունակ, երբ նրանք գտնւել են Էլիզարեանի կեղծ հովանաւորութեան տակ։ Նրա անձնասիրութիւնը խոցոտւած է, որովհետև տալով նրան և նրա մօրն ու քոյրերին մի չնչին օգնութիւն, անսահման ստորացրել է նրանց իր լուռ և ոչ լուռ նախատինքներով։ Այժմ նա կարող է վրէժխնդիր լինել, ոչ փողի, այլ իր տանջւած հոգին թեթևացնելու համար։ Անդրէաս Էլիզարեանն է նրան պարտական և ոչ նա, Օթարեանը Էլիզարեանին։ Անդրէասը առաջարկում է հաշւութիւն։ Թող Օթարեանը ստանայ մի քանի հազար սուրլի և ստորագրութիւն տայ, որ ոչինչ պահանջ չունի նրանից։ Առաջարկութիւնը վիրաւորում է Օթարեանին։ Նա հրաժարւում է։

Նա ուզում է հեռանալ, բայց ահա ներս է մտնում Անդրէասի երկրորդ աղջիկը, Մարգարիտը, որին սիրում է և որից սիրւում է։ Մարգարիտը ոչինչ չը գիտէ։ Նա եկել է Օթարեանին ճաշի հրաւիրելու և տեսնում է նրան փունատ, այլայլած։ Առանձնանալով նա հետ, հարցնում է յուզման

և փորձած այժերից կազմած խումբը, տեղերի մատչելի գները արդեօք կարողանալու են անտարբերութեան ճիրաններից հանելու Թիֆլիսի հայ հասարակութեանը, թէ՞ ներկայացումները շարունակելու են էքս-ատայի թատրոնական դահլիճի համար։

—Օր. Պապայեան վերջացրեց իր դասարօլները և օպերան դարձեալ բոլորովին դատարկ թատրոնում պիտի երգէր. եկէ վրայ հասած չը լինէին Ծննդեան և նոր տարւայ տօնները։

—Դատարկ է լինում շատ յաճախ և ոնա դրամատիկ. խմբի ներկայացումներին Արտիստիկ. ընկ. թատրոնը։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Դեկտ. 26-ին Թիֆլիսում վերայի գերեզմանատունը հողին յանձնուեց բժ. Ս. Ատանեանի մարմինը։ Թաղմանը ներկայ էին քաղաքագլուխը, քաղ. անդամները, քաղ. խորհրդի իրաւասունները, բժ. ընկ. նախագահը, բժիշկներ, Յովհաննեան դպրոցի աշակերտուհիները և շատ հասարակութիւն։ Արժ. Արսէն ա. քահ. Բագրատունին իմաստալից մի զամբանական խօսեց։ Դագաղի վրայ դրուած էին շատ պսակներ։

—Դեկտ. 27-ին Թիֆլիսում հողին յանձնուեց ակնաբոյժ Գ. Տարսաիձէի մարմինը։ Հանգուցեալը ոչ միայն Թիֆլիսում, այլև ամբողջ Անդրկովկասում յայտնի էր իբրև աչքի հիւանդութիւնների ամենալաւ մասնագէտ։ Նա մեռաւ հոգեկան երկարատև հիւանդութիւն քաշելուց յետոյ։

—Ինդիր է յարուցուում Թիֆլիսում բորսա բանալու մասին։

—Թիֆլիսի քաղ. խորհրդի իրաւասունները, Պետերբուրգի քաղ. խորհրդի օրինակին հետեւելով, խնդիր են յարուցել միջնորդելու ուր հարկն է, որ դռնապաններն ազատ պահուն ոստիկանական պաշտօն կատարելուց։

—Կովկասի հանքային ջրերի վերատեսուչ Թովչինսկուն առաջարկած է հրաժարուիլ իր այդ պաշտօնից։

—Բժշկ. Արտ. Շխեան հաստատուած է Թիֆ. առևտր. ուսումն. բժիշկ։

—Մոզդոկում, «Бак. Из.»-ի ասելով, ըսպանուած է գաշոյնի մի հարուածով տեղւոյն քահանայ Յովսէվեանս Պատճառն, ասում են, վրէժխնդրութիւն է եղել այն բանի համար, որ յիշեալ քահանայն սուտ մատնութիւն պոն են գնացել նրա կարգակից տեղական երկու հայ քահանայ։

ԲԱԴԻԻ ԳՈՐԾԱԴՈՒԼԸ

«Кавк.»-ի մ ջ տպուած է. «Դեկտեմբերի 23-ին, երբ Սև և Սպիտակ քաղաքներում աշխատանքներն արդէն վերսկսուած էին, օրւայ ժամը երեքին, կազակների պահակախումբը շըրջապատեց մի խումբ բանւորներով, որոնք սկսեցին յետ փշել նրան, բռնել նետել և նոյն իսկ հրազէններ պարպել նրա վրայ։ Պահակախմբին օգնութեան հասաւ կազակների մի կիսատարբերեակ, որը, բազմիցս արած նախազգուշացումներից յետոյ, ստիպուած էր կրակել հրացանները, որի ժամանակ խռովարարներից սպանուեցին երեք և վիրաւորուեցին հինգ հոգի։ Կազակներից երեքը խեղումներ ստացան, բայց ծանօթ տեղերը։ Նոյն օրը Բիբի-Հէյբաթում անկարգութիւններ տեղի ունեցան. բանւորների մի խումբ յարձակուեց ոստիկանական պահակների վրայ և անկարգութիւնները ճնշելիս սպանուեց մի և վիրաւորուեց մի քանի բանւոր։ Ընդամէնը սպանուած է Բիբի-Հէյբաթում և Բալախանում 20 հոգուց աւելի։

«Դեկտեմբերի 24-ին Բալախանում այրուեց 22 նաւթահորի վիշկա և դեկտեմբերի 26-ին—գարձեալ 20 վիշկա։ Բացի հետ դեկտեմբերի 13-ին վերականգնած հեռախօսի հաղորդակցութիւնը նորից ընդհատուեց մայի 24-ին»։

Պարզաբան

Նոր-Նախիջեւանի քաղաքային խորհուրդն այս օրերս, իրաւասու Չալխուշեանի առաջարկութեամբ, որոշել է Թոյլատուիթիւն խնդրել Նախիջեւանում հիմնելու ազգայոյզ գիմնազիոն այն պայմանով, որ հայ աշակերտների համար պարտադիր լինի կրօնի ուսումը հայերէն լեզուով, նաև հայոց լեզուի ուսումը մինչև 5-րդ դասարանը։ Այս գործը Պետերբուրգում պիտի բերելու համար քաղ. խորհրդի կողմից ընտրուած է իրաւասու Դ. Յովհաննես։

ՌՈՒՍԱԿԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Պորտ-Արտուրում, ինչպէս հետապրում են. «Рус. Сл.»-ին Զիֆուից, կենսական մթերքներն արժէին՝ շան միսը—40 կոպ. ֆունտը, ձիու միսը—60 կոպ., հաւը—30 րուբ., սագը—75 րուբ., կովը—600 րուբ., խոզը—200 րուբ., մի հատ ձուն—1 ր. 60 կ., մի գլուխ սոխը—50 կոպ.։ Թէյ, շաքար և սպիրտ դեռ ևս կային Արտուրում։ Դա մեռելների և վիրաւորների մի քաղաք էր։

—Պետերբուրգի երրեակ հաւատարմատարների մէջ միաք է յղացել հիմնելու երկ. հաւատարմատարների համատուսական միութիւն։

—Պետերբուրգում պիտի բացւի ռուս-ճապոնական պատերազմի մուզէում։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՔՐՕՆԻԿ

(Հեռագիրներ «Ռուս. Կորձակ.»)

Վ. Պալիս, 24 դեկտ.—Ռուսաց դեսպանատունը դեկտ. 23-ին Բ. Դրանը տուած մի յայտագրով պահանջում է պատերազմական տուգանքի այն մասը, որ պիտի վճարւի յունուարի 1-ին, այսինքն 350,000 ֆունտ ստերլինգ։

Պարիզ, 28 դեկտ.—Գուլլի գկպքը քննող յանձնաժողովը որոշեց, որ իր նիստերը տեղի պիտի ունենան հրապարակով այն բոլոր դէպքերում, երբ գործը կը վերաբերի իրողութիւնները պատմելուն կամ վկաների յուցմունքներին, այսինքն առաջնակարգ կարեւորութիւն ունեցող խնդիրներին, իսկ յանձնաժողովի խորհրդակցութիւնները տեղի կունենան գռնփակ, որովհետև հրապարակական վիճաբանութիւնները նոյն իսկ երկրորդական խնդիրների վերաբերմամբ լուրջ անյարմարութիւններ կը ներկայացնէին։ Մասուլի ներկայացուցիչներին թոյլ կը տրւի դահլիճ ժամեր առմամակներով։ Հրապարակական նիստերը տեղի կունենան միմիայն ուրբաթներ՝ բանկետների ժեծ դահլիճում։

Բեռլին, 28 դեկտ.—Վիլհելմ կայսրն ընդունեց ռուսաց դեսպանին և դեկտ. 29-ին ճապոնական դեսպանին։

Բեռլին, 28 դեկտ.—Վիլհելմ կայսրը, ի նկատի ունենալով Ատեօսել և Նողի պեներալների քաջութիւնը, որ նրանք ցոյց տուին Պորտ-Արտուրի պաշարման ժամանակ, շնորհեց նրանց «Pour la merité» շքանշանը։

ՆՈՐԱԴՈՑՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մամրագրութեանս մէջ սոպցել են հետեւեալ նորադոյն հրատարակութիւնները՝ Կ. Պօլսի պատրիարքարանից 1905 թ. Ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան հիւանդանոցի համար. օրացոյց և տոմարական գիտելիք, ժամանակագրական և աշխարհագրականք, պետ. վիճակագր., հայ եկեղց. և

պատճառը։ Օթարեանը աշխատում է թագցնել, բայց Մարգարտի թախանձին չի դիմանում և յայտնում է նրան բոլորը։ Մարգարիտը իր հօրը մինչև այժմ համարել է աղնիւ, պաշտել է նրան և յանկարծ լսում է իր սիրեցեալից, որ նա կողոպտել է և կողոպտել է ո՛ւմ... իր սիրեցեալին։

Չար լուրը հարւածում է Մարգարտին։ Նա թուլացած ընկնում է աթոռի վրայ։ Այսուհից սկսում է նրա համար անասելի տանջանք։ Նրա հոգին մաքուր է, անարատ։ Ունի՞ իրաւունք սիրելու մի մարդու, որ այնպէս անպիտարար կողոպտած է իր հարազատ հօրից...

Օթարեանն ինքը ուզում է հրաժարւել նրանից։ Բայց Մարգարիտը չի թողնում։ Ոչ, նա դեռ չի հաւատում Օթարեանին։ Նրա հայրը չի կարող այդչափ անխիղճ լինել։ Ապացոյցներ են հարկաւոր։

—Դու իմ սէրը թունաւորեցիր, դու էլ պարտաւոր ես բժշկել այն...

ԱՐԱՐԻԱՑ ԵՐԿՐՈՐԴ

Ընդարձակ հիւրասենեակ էլիզբարեանների տունը, կահաւորւած շքեղ և հարուստ։

Գալիս է Անդրէասի մեծ աղջիկը, Ռոզալիան։ Նա փոքր քրոջ հակապատկերն է, նորամոլ, շռայլ, անհոգ։ Նա ուրախ է, հազիւ գտել է մի քանի իր սիրած հագուստեղէն և պարիզից նոր ստացել է նորաձև գլխարկ։ Տեսարան, ուր արտայայտւում է նրա բնաւորութիւնը։ Մարգարիտը նախատում է նրան, որ անվերջ շռայլում է հօր փողերը, այն հարստութիւնը, որի վրայ ծանրացած է մի մեծ մեղադրանք։ Ռոզալիան ատում է Օթարեանին հոգու բոլոր ուժով։ Բանն այն է, որ առաջ սիրել է այդ երիտասարդին, կարծելով, որ լինքն է նրա ուշադրութեան առարկան։ Բայց երբ համոզւել է, որ Օթարեանը Մարգարտին է սիրում, հիասթափւել է չարաչար։ Նա Օթարեանին համարում է գրպարտիչ և խօսք է տալիս Մարգարտին վռնդել նրան տնից, եթէ դայ։ Սպառնալիքը Մարգարտի վրայ չի ազդում։ Նա ճշմարտութիւն է փնտրում։ Ո՞վ է, արդեօք, մեղաւորը, հա՞յրը, թէ՞ Օթարեանը։

Գալիս են Անդրէասը, Սաղաթէլը և Բագրատը։ Բոլորն էլ գրգռւած են։ Գործը լուրջ բնաւորութիւն է ստացել։ Օթարեանը ապառնում է էլիզբարեանին դատի ենթարկել, եթէ սա կամաւ չի խոստովանիլ իր յանցանքը։ Ընտանեկան խոշոր տեսարան, ուր պարզւում են ընտանիքի անդամների բնաւորութիւնները։

Ռոզալիան յայտնում է հօրը, թէ Օթարեանն ու Մարգարիտը սիրահարւած են միմեանց վրայ։ Լուրը ուրախացնում է Անդրէասին։ Նա անմիջապէս վճռում է օգտւել այս հանգամանքից։ Կանչում է իր մօտ Մարգարտին և ժեղմ, չողոքորթ խօսքերով համոզում է նրան պահանջել Օթարեանից գրաւոր ապացոյցներ։ Նա գիտէ, որ այդպիսի ապացոյցներ կան, մնացած իր հանգուցեալ ընկերոջ ժամից յետոյ։ Մարգարիտը, որ տակաւին լիովին համոզւած չէ, թէ իր հայրը կողոպտիչ է, խոստանում է և, երբ Օթարեանը գալիս է, պահանջում է նրանից գրաւոր ապացոյցները։ Օթարեանն անպայման հաւատում է նրան և անմիջապէս բերում է ու յանձնում նրան թղթերը։ Թող նա լինի դատաւոր և վճռի, ով է յանցաւորը և ով է արդարը։ Այժմ, վերջապէս, Մարգարիտը կիմանայ ճշմարտութիւնը։

ԱՐԱՐԻԱՑ ԵՐՐՈՐԴ

Նոյն հիւրասենեակը։ Վարագոյրը բարձրանալիս՝ բեմում սիրուն է կիսախաւար։ Մարգարիտը նւագում է մի թախծալի եղանակ։ Նա տխուր է և տանջւում է։

Բագրատը պատրաստւում է Ռոզալիայի հետ գնալու տեխնօլօգների երեկոյթը, որի կառավարիչն է։ Նա Մարգարտին էլ առաջարկում է գնալ իր հետ։ Օրիորդը մերժում է։ Նրա տրամադրութիւնը բոլորովին այլ է։ Նա յայտնում է Բագրատին, թէ այժմ այլ ևս ոչ մի կասկած չունի, որ իրենց հայրը կողոպտել է մի խեղճ, անօգնական ընտանիք և կողոպտել է ամենայն անպիտանութեամբ։ Լուրը հարւածում է Բագրատին։ Բայց նա դեռ չի ուզում հաւատալ և պահանջում է, որ Մարգարիտը ցոյց տայ իրեն գրաւոր փաստերը։ Մարգարիտը հրաւիրում է նրան իր սենեակը ցոյց տալու։

Գալիս են Անդրէասն ու Սաղաթէլը։ Այժմ նրանք այլ ևս կասկած չունին, որ վտանգն անխուսափելի է։ Մարգարիտը ցոյց է տւել Անդրէասին գրաւոր ապացոյցները նրա յանցանքի և մէկ մէկ կարդացել մօր ներկայութեամբ։ Անդրէասը այժմ ղրաւած է մի մտքով—ինչպէս ոչնչացնել այդ ապացոյցները։ Մարգարիտը պահում է նրանց ինչպէս սրբութիւն։ Պահանջել նրանից, որ ոչնչացնի ինքը, անկարելի է. Մարգարիտը արդէն անչափ ազնիւ է մի այդպիսի բան անելու համար։ Մնում է մի ելք։ Անդրէասը վազուց է մտածել այդ մասին։ Պէտք է յղացած ծրագիրը աւելի մանրամասն մշակել։ Նա հրաւիրում է Սաղաթէլին իր առանձնասենեակը, այնտեղ խորհրդակցելու դիւային վճռի մասին։ Նրանք հեռանում են։ Գալիս են Բագրատը, Ռոզալիան և Մարգարիտը։ Բագրատը յուսահատւած է։ Նա տեսել է ապացոյցները և համոզւել։ Եթէ այդ թղթերը նորից անցնեն Օթարեանի ձեռքը, սա պահանջելու է դատարանով իր ժառանգութիւնը. եթէ ոչ հօրը, գոնէ Բագրատին պատժելու համար,

պատրիարք. տիզիկ. գործնական բաժին, պրակտ. բաժին. ճոխ և բազմակողմանի պարունակութիւն, պատկերազարդ, VI տարի 512 եր. կ. Պոլիս, տպագր. Յ. Մատթէոսեանց, գինը 10 ղրշ.

Ե. Փոխչանից Լոյս պատկերազարդ օրագրոյց-հանդէս 1905 թ. տեղեկատու, վիճակագրական, առողջապահական, պատմական, գիտական, գեղարուեստական. և այլ յատկացեալներով, 650 էջ, գինը 1 ր. 20 կ., Թիֆ. տպ. Չերմչ. Յ. Գաղթաշեանից լիակատար բառարան հայերէնից ռուսերէն, Ա. պարկ., մինչև Բազմա. 128 եր. Թիֆ. տպ. Մն. Մաթրոսեանցի

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Սալմաստ, 14 դեկտեմ.

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ ՍԱԼՄԱՍՏՈՒՄ

Մինչև այժմ Ատրպատականի առաջնորդական խնդրի առթիւ թերթերում տպագրուող թղթակցութիւններից ևս բնում էր նրա անկանոն վիճակը, որից և առողջանում էին զանազան դժգոհութիւններ ժողովրդի մէջ։ Եղիշէ ծ. վարդապետի հեռանալուց յետոյ, ինչպէս յայտնի է, առաջնորդական աթոռը թափուր էր մնացել, իսկ գործերի վարումը ժամանակաւորապէս յանձնուած էր մինչև այժմ Մեսրոպ վարդապետ Մաքսուդեանին, ներկայումս Մշոյ վ. Փափազեանին։ Վերջինը Նորին Վեհափառութեան հրամանով ձեռնարկել է առաջնորդական ընտրութեան։ Նոյն գործի առթիւ անցեալ մայիս ամսի 18-ին Սալմաստում տեղի ունեցաւ պատգամաւորական ընտրութիւնը, բայց սրտմտելի ընտրութիւնը եղել էր հակառակ Ատրպատականի եկեղեցական կանոնադրութեան, ուստի պէտք է համարել ապօրինի։ Համաձայն կանոնադրութեան, իւրաքանչիւր երկու հարիւր տուն իրաւունք ունի տալ մէկ պատգամաւոր, և Սալմաստը ունենալով մօտ 1600 տուն բնակիչ, պէտք է տար 8 հոգի, մինչդեռ անցեալ անգամ տուել էր միայն 2 ներկայացուցիչ. այսինքն նա ունէր հաւասար ձայն բոլոր միւս գործակալութիւնների հետ, որոնք ուներն անհամեմատ քիչ բնակիչ. բացի այդ, ընտրութեան մասնակցում էին ոչ թէ այդ աթիւ տուանձնապէս ընտրուած անձնաւորութիւնները, այլ իւրաքանչիւր գիւղ, չընայելով բնակիչների քանակական անհաւասարութեան, ուղարկում էր եկեղեցու հոգաբարձութիւնը, թուով չորս կամ հինգ հոգի։ Բնականելով մայիսեայ այդ անկանոն ընտրութիւնը, նոր տեղապահը հրաման է ուղարկել տեղւոյս առաջնորդական գործակալ քահանային պատգամաւորական ընտրութիւն կատարելու համաձայն նոր կանոնադրութեան։ Բայց ի նկատի ունենալով նորին արժանապատուութեան ծերութիւնը և «մտաւոր անձեռնհասութիւնը յաջող կերպով ի կատար ածելու այդ գործը», լիազօրութիւն է տուած Սալմաստի պերճոցների ընդհանուր տեսուչ պ. Ե. Ֆրանդեանին, իբրև գործակալի խորհրդատուի, անձամբ ձեռնարկելու ընտրութեանը։

Ըստ կանոնադրութեան, պիւղերում գումարուում են ծխական ժողովներ, որոնք համեմատ բնակիչների քանակին՝ ընտրում են ներկայացուցիչներ իւրաքանչիւր 25 տուն մէկ հոգի։ Ծխական այդ ժողովները շուտով կըվերջանան և Հաւքտանում տեղի կունենայ ներկայացուցիչների ընդհանուր ժողով, ուր կընտրուեն 8 պատգամաւորները։

Վ. Բ.

ՊԱՏԵՐԱԶՄ

(Հեռագիրներ «Ռուս. Դործ.»)

24—31 դեկտ.

Տոկիօ.—Դեն. Ստեսսէլն ամենէ խոսք է տուել վեռադառնալ Ռուսիա Նագասակիի վրայով։ Պորտ-Արտուրի գերիների յանձնումը վերջացած է. գերի են առնուած ընդամենը 878 սպայ և պաշտօնեայ և 23,491 զինուոր։ Ճապոնական երկաթուղու վարչութիւնը հրահանգներ է ստացել, որ պատրաստութիւն տեսնէ 20,000 ռուսներ փոխադրելու Սիմոնոսեկի։ Շարժական բոլոր կայքերը պիտի փոխադրուին Ճապոնիա։ Ֆոկ, Սմիրնով և Դորբատովսկի գեներալները և փոխ-ծովակալ Վիրէնը մեկնում են Ճապոնիա իբրև գերի։

Տոկիօ.—Հրատարակած է մեկադօյի մի հրովարտակը, որի մէջ յնորհակալութիւն է յայտնուում զեն. Նոդիին, երբորդ զօրաբանակին, Տոգօյին և միացեալ նաւատորմղին Պորտ-Արտուրը վերցնելուն համար։ Տոգօն վերցրել է Լեաօդունի քերակղզու պաշարումը։

Պորտ-Արտուր.—Պորտ-Արտուր էր ուղարկած ընդ. շտաբի սպայ կապիտան Զունոդա Ստեսսէլին յանձնելու համար մեկադօյի զօրի մի հեռագիրը, որի մէջ վստահացնում է, որ բերդապահ-զօրքին ցոյց կըտրւի մեծ ուշադրութիւն Զունոդան Ստեսսէլի համար բերել էր հաւեր և գինիք։ Խօսակցութեան ժամանակ Ստեսսէլը հարցրեց, թէ ո՞րտեղ է գտնւում Կուրոպատկինը։ Զունոդան պատասխանեց, թէ ինքը հիշտ տեղեկութիւններ չունի, բայց որքան յայտնի է, Կուրոպատկինը պէտք է որ գտնւում լինի Մուկդէնից ոչ հեռու։ Ստեսսէլը նկատեց, որ ինքը հոկտ. 29-ից ի վեր տեղեկութիւններ չի ունեցել։ Ստեսսէլն ասաց, թէ ինքը ուղարկել էր չինացի լրտեսներ, որոնք վերադառնալով յայտնել էին, թէ բերդի ազատման համար ուղարկուած ռուս զօրաբանակը գտնւում է Զինջօուում, Պորտ-Արտուրից 20 մղոն հեռու։ պէտի հիւսիս։ Ստեսսէլն, ըստ երեոյթին, թերահաւատութեամբ չըվերաբերուեց, երբ Զունոդան ասաց, որ Կուրոպատկինը պարտութիւն է կրել և յետ է շպրտուած դէպի Մուկդէն։ Զունոդան Ստեսսէլին ցոյց տուեց Շախէի մօտ և կու զօրաբանակների բռնած դիրքի քարտէզը։ Ստեսսէլը զարմանք յայտնեց, և ապա հարցրեց, թէ ո՞րտեղ է Բալտիկի նաւատորմիղը։ Իմանալով, որ նաւատորմիղի մի քանի նաւեր դեռ ևս չեն անցել Բարեյուսոյ հրւանդանը, Ստեսսէլը տերութեամբ ասաց. «Այժմ, Պորտ-Արտուրի անկումից յետոյ, նաւատորմիղի առաքումը նպատակ չունի»։

Բերլին.—Լոնդոնից հաղորդում են, որ ճապոնական զօրաբանակը սպասում է Կուրոպատկինի յառաջացման։ «Berl. Taq»-ի թղթակից կապիտան Գեդկէն, որը վերադարձել է Մանջուրիա, ռուսների յառաջացումը հաւանական է համարում, որովհետև, նրա ասելով ռուսաց զօրաբանակը թուով գերազանցում է ճապոնական զօրաբանակից։

Պարիզ.—«Թայմս» լրագիրը կարծում է, որ Ռուսիան չի կարող հաւաձայնել անյապաղ, հաշտութիւն կայացնելու։ Պատերազմը կը շարունակուի։ Այդ բանը հարկաւորում է չէզոք պետութիւններին սառնասիրտ և կորեկտ մնալ։

Այն ժամանակ Բագրատը զրկելու է իր ասպգին գործարանից, որի վրայ հիմնել է իր ապագան, իր ամբողջ բաղդատութիւնը։ Նա և Հօզալիան աշխատում են հաժոզել Մարգարտին չըվերադարձնել այդ թղթերը Օթարեանին։ Բայց զուր։ Մարգարիտն անյողդողդ է։ Նրա համար ամենից առաջ պատիւն է։ Իսկ պատիւը միմիայն ճշմարտութեան մէջ է։ Նրա հայրն այն ժամանակ կը մաքրի իր պատիւը, երբ բոլոր գողացածը կը վերադարձնի տիրոջը։

Բագրատը Հօզալիայի հետ գնում է պարահանդէս, տակաւին յուսալով, որ վաղը Մարգարիտը կը փոխի իր մտադրութիւնը։

Բոլորովին հակառակ համոզմունքի է շոայլ և ապականուած Սուրէնը։ Նա համաձայն է Մարգարտի հետ։ Նա հաւանում է նրա մտադրութիւնը և նոյն կարծիքի է, թէ իր հայրը պէտք է բաւարարութիւն տայ Օթարեանին։

Բանը դատարկուում է։ Կէս գիշեր է։ Մարգարիտը քնած է։ Երևում են Անդրէասը և Մաղաքէլը։ Նրանց դէմքերը խորհրդաւոր են։ Խօսում են կիսաձայն։ Ոչնին խաւար միտում։ Անդրէասը գաղտնի մտնում է Մարգարտի ննջարանը և... գողանում է իր անկեղծութեան և անպատուութեան ապացոյցները... Եւ այն րոպէին, երբ նա, թղթերը ձեռքին, բանով անցնում է իր սենեակը, զարթնում է Մարգարիտը, հետևում է նրան։ Դռների մէջ նկատում է հօրը՝ գողացած թղթերը ձեռքին և... ուշաթափւում։

ԱՐԱԲԻԱՑ ՁՈՐԲՈՐԴ

Դարձեալ Անդրէասի առանձնասենեակը։ Բագրատը հաշիւ է պահանջում Մաղաքէլից, որ քսան ու հինգ տարի շարունակ գողացել է Էլիզբարեանների։ Մաղաքէլը վրդոված է, աշխատում է դոռում-զոչիւններով արգարանալ։

